



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



891-99
₹-22

“Աշու” կ բարեգործություն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
19 NOV 2011
19318. 2151

891.99
Հ-22

Հ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.

ԱՆՀՈՒԻՆԻ ԷԶԵՐՈՒՄ



Ա. ՊԵՏԵՂՅԱՆԻ ՀԱՅ
ԱՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐԱԳԱԿԻՆ ՏՊԱՐԱՆ
1904

31 MAY 2013

37576

Дозволено цензурою. С.-Петербургъ, 5 Ноября 1903 года.

111
39



„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.



201

Երկնքի Թագուհի
Հոգուպէս կայծակին
Ես ձօնում եմ երգեր,
Երգերն այս վշտածին...
Իմ հոգին էլ կայծակ,
Ու իմ երգը որոտ...
Ես ձօնում եմ նորան
Այս երգերը ցաւոտ...



ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ինձնից երդ ես ուզում, երդ խնդուն, վառվռուն,
Բայց ես ինչը երգեմ քեզ համար...
Ես ծնուած եմ հեռու, ու անմէր, ու անտուն,
Սուզ մրուր եմ ըմպել անդադար...
Կրծքիս տակ ես սնել եմ ըղձեր ու տենչանք,
Իսկ ձեռիս ունեցել թուլութիւն...
Ինձ օաար է եղել աշխարհի միշտ բերկրանք,
Ինձ նեղել է յաճախ գերութիւն...
Եւ ամեն մի հնչիւն լարերիս տիրամած
Միշտ անձուկ ու վշտոտ է երգում...
Այս, եղբայր, տես, չորս կողմն է զաժան, մոայլուած,
Ողջ աշխարհն է ողբում ու սգում...
Տես, պայմում է որոտ, որոտի յետեից,
Եւ որքան են թօշնում ծաղիկներ...
Օ՛, որքան վառ յոյսեր ու տենչանք բերկրալից
Մին-խոնաւ գերեզման են մտել...
Ի՞նչ երգեմ ես խնդուն, քնարով իմ տխուր,
Երբ որ վիշտն է հսկայ, և անհուն են ցաւեր...
Ի՞նչ երգեմ ես ուրախ, երբ աշխարհը հանուր
Այդքան պարզ է սգում օր-գիշեր...

II.

Այն հաւքեր, որ աշնան
Չուեցին մեզանից,
Խիտ-խմբով ու ծիւ-ծիւ
Երևում են նորից:

Բոյլ-համբոյլ ծաղիկներ,
Որ անշան թօշնեցին,
Ուկեցօղ—ժպտաւոն
Փէլվլում են կրկին...

Ես յոյսով եմ առ միշտ,
Որ կը գայ սուրբ գարուն,
Հայրենիք, կանցանէ—
Քո ամօթ—գերութիւն...

Մեծատունը անմիտ
Թող հաստատ գիտենայ,
Որ խղճուկն էլ մի օր
Վառ գարուն կը տեսնայ...

Կը վերցնեմ ես անվախ
Դրօշակն իմ ծածան,
Գոռ բախտին դէմ առ դէմ
Կը սպասեմ այն զարնան...

III.

Էյ վախ, աղիզ իմ ընկերներ,
ծով է սիրտըս ցաւի, արեան...
Ես հէքիմեց դեղ ուղեցի,
Ասաց. քո ցաւն է անդարման...

Եւ այնուհետ վիզըս ծուած,
Դարձայ սարին, ժէո—քարերին,
Որ դեղ անեն սրտիս սուգ-լաց,—
Դեղ չը գտան իմ ծով դարդին...

Յոյսս մարած, հոգով դաժան,
Հեռու կեանքի փայլ ափերից,
Անսէր-անմէր, ըղձով կործան
Ես շըջում եմ այն սկ' օրից...

Է՞ն, կեանք սգւոր, սիրտ իմ սկ-ցաւ,
Հեղի էլ բախտ չի վիճակուած...
Ե'կ, իմ քնար... Քեղնով վաղուց
Հեմ երգել կեանք վշտից էրուած...

IV.

Էս կեանքը սկ' բանդ, էս կեանքը մութ խուց,
Ազատը սիրող ինչ ես որոնում...
Զեռքերիդ շղթայ, կեանքիդ ծանը լուծ,
Հերիք չէ այլքան սգում ես, հեծծում...

Ա՞ն ազատութիւն... կեանքից էլ դու վեր,
Մտքից էլ դու վեր... Եթերը քեզ գահ...
Տենչ ու բոց սրտիս պապակը անծէր,
Վեհ ազատութիւն անհուն ու անմահ...

Զարնեմ նեղ ու մութ կեանքիս կապանքին,
Փշրեմ ու ազատ թափով սլանամ...
Արծուի պէս վեհ, ամպերի փէշին
Սուրբ ազատութիւն զըկեմ ու երթամ...

V.

Դարդիս հետ մեն-մենակ ես կանգնած եմ սպւռ.
Ճըջապատըս տիրում է դադար...
Ու անմէր, ու անսէր, ու հոգով վիրաւոր
ես դիտում եմ իմ շուրջ, սե՛ աշխարհ...

Ճատ հեռու մժապատ այն սարի լանջերին
Հովիւները կըակ են արել.
Եւ քուլայ-քուլայ ծուխ դէպի վեր, ջինջ երկին
Բարձրանում է տիսնւր, անարգել...

Ջինջ առուակը ողբով, սրտմաշուկ քըքիչով
Եւ լալիս, և վազում է հեռուն...
Ծաղկաւէտ, ոսկեզօծ արտ-մարզեր անխոռ
Լուռ խոհում ու տիրում են անհուն...

Սկաթոյր ամպերի մի հատիկ կարաւան
Տրտմայոյզ հետեւում է լուսնին.
Պապղուն վառ աստղերը խոկում են անձայն
Ու իրար են նայում վշտագին...

Դարդիս հետ ես կանգնած եմ մենակ դաշտի մէջ,
Ճըջապատըս տիրում է դադար...
Ա՛խ անմէր եմ, անսէր... և իմ ցաւն է անշէջ,
Ու դիտում են իմ շուրջ, սե՛ւ-աշխարհ...

VI.

ԲԱՆԱՍՏԵՂՑԻՆ

(Նմանող.)

Այնտեղ, ուր խրոխտ լողում են ամպեր,
Անկոպար երկնի ջինջ-նինջ էջերում,
Այնտեղ քո երգին յստակ, անվեհեր,
Անհուն հեռաստանն է ականջ դնում...

Օտար երկրային սե-ցաւ դաշտերին,
Քո երգը այնտեղ հնչվում է արձակ...
Հեռու ափերից կեանքի վշտածին,
Մեղյուշ է լսում այնտեղ քո նուազ...

Այնտեղ քո կոչին աստղեր շողզողուն
Մերթ ձայն են տալիս դողիդող, կամաց...
Անհունի ծոցում քո երգին հնչուն
Արծիւն է լսում թևերը փուած...

Ա Ի Ե Ր Ա Կ Ն Ե Ր Ի Ս Է Զ.

Իմ չորս կողմ ալեհեր բնութեան բեկորներ,
Յիշատակ ու մոխիր անցեալի...
Մարդկային խուսափուկ բախտի լուռ վկաներ,
Սրտմաշնուկ ես, պատկեր վշտալի!...

Յուշերի դաշտերից առ յաւէտ սլացած
Մի վառ օր այստեղ կեանք էր եռում...
Այստեղ կար մեծատան ապարանք փառապանձ,
Ու անմէր խեղճերի հեծեծում...

Գուց' այստեղ արծաթուն գիշերներ սիրահար
Սպասել է սիրոյ տեսութեան...
Իսկ այնտեղ գուց' եղել է շրեղ մի տաճար
Աստուծոյ կամ ուսման—գիտութեան...

Կայծակի պէս անցել են դարեր ու տարիք,
Ու ողջ կեանքը աճեան է փոխուել.
Ել չը կայ այն օրից կենդանի մի հատիկ,
Ողջն անցել է, առ միշտ կործանուել...

Եւ իմ միտքը այս սուգ-պատկերի առաջին,
Դարերի անթափանց մշուշից,
Արդ՝ հասնում է ծերուկ հնութեան օրերին,
Ելք աստ կեանք էր եռում աղմկալից...

ԸՆԿԵՐՈՉՍ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԵՐԱՅ.

Դու անցար քո վշոտ սկ՝-ուղին,
Փուչ-կեանքում թողեցիր վշտի ծով.
Հողի գիրկը անդորր է, անգին,
Մունչ քնիր դու անոյշ, անվրդով...
Քնիր, մահը օրօր է ասում...

Ճուտ կը գայ և գարունը ալ-վարդ,
Դյաշտ-հովիտ ոսկեզօծ կը զուգուեն.
Քեզ թփեր կը գրկեն ժպտազարդ,
Ու վերադ զով-հովեր կը սահեն...
Քնիր, մահը օրօր է երգում...

Ցօղ-ցոյուած արծաթուն առաւօտ,
Վշտածոր, ստուերոտ և գիշեր,
Քո վերայ քաղցրածայն ու թախծնտ
Կը խօսեն սիրակէզ Բլբուներ...
Հանգիր, մահը օրօր է կարդում...

Ընխուսափ տարիներ կը սահեն
Դէպ մշուշն անցեալի անսահման.
Ու բոլորն անխուսափ կը մտնեն
Վիճակուած և անվիշտ գերեզման...
Քնիր մահը հանգիստ է կոչում...

IX.

ԿԱՅՃԱԿՆԵՐ.

Սևաթոյր, խտացած,
Վշտածոր—վշտածին,
Կնճռոտ—կսկծոտ,
Մշտալուռ ամմերի
Ցաւ-արիւն կամարում
Ջանթահար-դալարուղ,
Հրաբուղիս—բոցավառ,
Լեզուաձե—պապոն,
Ու երկին ու եթեր,
Ու տարերքը ճեզքող,
Ոգեշունչ—կատաղի
Կրակէ կայծակներ,—
Որ իբրև բնութեան,
Ճշմարտի զօրաւոր
Վեհապանծ—փառահեղ,
Անսահման—անսասան
Վսեմ-լոյս—յաղթանակ,—
Եւ իբրև փառաւոր,
Մտքից-վեր, ոյժից-վեր
Անսահման—անկոպար
Գեղեցկի յաղթութիւն,—
Ոգու-պէս, հոգու-պէս
Ճախրելով մեղսաւոր
Սին-ունայն աշխարհի

Դժնաշունչ երեսին,—
Տապալում էք, այրում
Ժէռ ու քար, չար-խաւար,
Ու կեանքեր, ու սրտեր...
Դալարուէք, բռնկուէք
Անապատ ու դժոխք
Կրծքիս տակ, հոգուս մէջ...
Ու զարնէք, ու փշրէք,
Ու անհետ կործանէք
Վշտի ժայռը սրտիս...

II.

Բնութեան արքանդի
Զօրագոյն դուք ծնունդ...
Հարազատ—ճշմարիտ,
Անվեհեր—անսասան,
Խաւարի յաղթարար,—
Բնութեան ահաւոր
Մշտափառ զաւակներ,—
Աըսելք, աըսեմուտք,
Ու հիւսիս, ու հարաւ
Մտքի պէս սաւառնող,—
Վեհափառ—կայծաթոր,
Մըրկի ու կռուի,
Ու լոյսի, ու լոյսի
Բոցափայլ—վառվոող
Անզարզանդ մարզարէք,—
Աստուծոյ վեհ գահից

Մինչ երկիրը մեզսոտ
 Փայլատակ—բոցկլտող,
 Յաղթանակ—կայծակներ,—
 Պապակած է հոգիս,
 Զեղ կարօտ է հոգիս...
 Ծաւալուէք, դուք յաւէտ,
 Անսահման պարփակուէք
 Մըրկի միշտ ծարաւ
 Սև—խաւար իմ հոգում.

III.

Կայծակներ, ձեզի պէս
 Գալարուել եմ ուզում
 Ովկիանի փրփրող,
 Ցնձալի—աբցունքոտ
 Մթին կործքը անհուն,
 Որ այնտեղ, ջրերի
 Ահարկու անդունդում
 Մոռանամ ու թաղեմ
 Այս ունայն աշխարհի
 Մանրողի ցաւ—հոգսեր,—
 Ու նորից բոցաձեւ,
 Ոգու-պէս, չոգու-պէս
 Վառվուել, բռնկուել,
 Ու եթերը անհուն,
 Հոծ կամարը երկնից
 Ջանթահար հարուածի
 Գոռ թափովը ճեղքել,

Եւ հասնել Աստուծոյ,
 Աներև, վեհապանծ
 Աստուծոյ Սուրբ Գահին,
 Ու լինել յայտարար
 Ու թարգման մարդկային
 Փուշ-կեանքի չարիքին...

X.

Ո. Մանո-էլեանչյ.

Եւ ես սիրել եմ, սիրիր նաև դու
 Մեղյուշ—երփներանգ զարդերը գարնան,
 Թօշնած թփերի սօսափը վշտու
 Ու սուրբ կոչնակը վերջին հանզստեան...

Եւ ես սիրել եմ, սերիր նաև դու
 Այտերը դալուկ, խօսքեր դալկացօղ,
 Եւ տխրազզեստ այն վեհ լոռութեան
 Մեղեղին մեռնող...

Եւ ես սիրել եմ, սերիր նաև դու
 Վսեմ պատրանքի, ցնոր երազի
 Տագնապը մահու.

XI.

Ես հպարտ եմ անհուն
Ես անյաղթ կը մնամ...

Ես հպարտ եմ անհուն,
Ես անյաղթ կը մնամ...
Ես զերուած՝ կապանքում,
Եւ իմ սիրտը հրդեհ,
Եւ իմ կուրծքը ժէռ-քար,
Եւ իմ կուրծքը երկաթ,
Եւ սակայն ես անյաղթ,
Եւ անյաղթ եմ առ միշտ...
Եւ հոգիս բարձրութիւն,
Ես հպարտ եմ անհուն
Ես անյաղթ եմ, մենակ...
Վեհութեան դաշտերից
Ժէկ-շանթի երակով,
Անհունի ափերից
Փայլակի հարուածով
Ինձ տրուած է վեհ-ոյժ,
Մեծութեան անյագ կիրք,
Կիրք հզօր սրբազան...
Ինձ տրուած է վերից
Անսահման զօրութիւն,
Եւ հոգու լայնութիւն,
Ես ազատ եմ հոգով,
Ես հպարտ եմ անհուն,
Ես զերի եմ... սակայն

Ես հպարտ եմ յաւէտ...
Իմ հոգին անկոպար
Անհունին մտերիմ.
Իմ հոգին է լոյսի
Պապակած ու ծարաւ...
Եւ անծայր է, անհուն
Սուպաստը հոգուս...
Եւ հոգուս զօրագոյն
Ահարկու բոց-կըքով
Կամեցել եմ յաճախ
Այդ լաշվարդ լազուրից
Բոյլ աստղերը պոկել...
Բոյլ աստղերը պոկել,
Հոգուս խորքը նետել...
Եւ ստէպ իմ հոգին
Կարօտել է անհուն
Կործանիչ մըրկի...
Ես եղբայր մըրկին՝
Հարազատ եմ նորան...
Կարօտել եմ ես մերթ
Կայծակին, որոտին...
Ու ես մերթ իմ հոգու
Լայն հպարտ բոց-կըքով
Կամեցել եմ կայծակն,
Ու որոտն, ու մըրկի
Անհունի լանջերից
Իմ հպարտ վեհութեամբ
Անջատել—գողանալ'



Եւ հոգուս անդունդում
ծրաբել ու թաղել...
Ես գերի եմ հիմայ,
Բայց ինչ էլ որ լինի,
Ես գերուած էլ լինեմ,
Եւ նորից անսահման
Խորութեամբը լցուած՝
Ես ունեմ զօրութիւն,
Ես գերուած եմ... սակայն
Ես հպարտ եմ անհուն...

II.

Ես գերուած կապանքում,
Ու ձեռքերս շղթայ,
Ես գերուած եմ առ միշտ,
Եւ սակայն ես անյաղթ,
Ես հպարտ եմ անհուն...
Կաշկանդուած եմ թէկուզ
Արինէ ամպերից,
Երկաթէ ամպերից,
Վշտաժայու ամպերից
Սևահիւս վանդակով,
Եւ թէկուզ իմ վերև
Բնաւին չեմ տեսնում
Կենսուրախ լոյս—արև,
Բայց էլի ես անյաղթ,
Ես ունեմ զօրութիւն,

Ես հպարտ եմ անհուն...
Եւ այս միտքը դաժան,
Այդ գոռ միտքը խոժոռ,
Որ սեցաւ վանդակիս,
Վշտաժայու ամպերից—
Սևահիւս վանդակիս
Մօտ կանդնած է այդպէս,
Եւ այդ միտքը, որ միշտ
Ու կեանքեր, ու սրտեր
Տապալում է, գերում.
Կաշկանդում է իսպառ,—
Այդ սե միտքը ահա
Ինձ ուզում է յաղթել...
Կլանել է ուզում
Հոգուս կիրքն ու նորա
Անսահման լայնութիւն...
Ու չուծ, ու զայրոյթ
Կատաղի աչքերով
Ինձ յաղթել է ջանում...
Անսահման, անսասան,
Կայծակից էլ արագ,
Ոգու պէս, հոգու-պէս
Չարանենդ, դաժան միտք,
Ես գերուած եմ... սակայն
Ես հպարտ եմ անհուն,
Ես անյաղթ կը մնամ...

III.

Եւ այդ գոռ, հոգեճինշ
Վշտի դեն անբարբառ,
Որ կանգնած, ահարկու
Հարուածներ է ուղղում,
Ջանթ հարուած է տալիս,
Սպառնում է նա ինձ,
Սպառնում է անծայր...
Օ՛, տանջէք, չարչարէք,
Ջանթերով ինձ այրէք...
Ես ձեզի անձնատուք
Բնաւին չեմ լինել...

IV.

Ես կայծակ եմ հզօր,
Ես կրակ եմ կրքի,
Սուրբ կրքի Մեծութեան...
Իմ հոգին զօրաւոր
Պապակած է կռուի...
Ես գերուած եմ թէկուզ
Եւ կաշկանդ մարմինով,
Բայց հոգիս է ազատ...
Ես գերուած եմ թէկուզ,
Բայց հպարտ եմ անհուն,
Ես անյաղթ եմ, մենակ!...
Ահա և դժնաշուք

Գերութեան սկ՝-մըռւր,
Վշտաժայու-երկաթէ,
Կաշկանդիշ-տըորող
Վանդակիս ձախ կողմից
Մեն-կանգնած է գծուծ,
Մանրութեան զաղափար,
Հեղնութեան արդանդից՝
Սողալու ընդունակ,
Անհպարտ, պատուազուրկ,
Անսահման փոքրութեան
Համոզիչ ապացոյց,
Ծաղրարժան ու լկտի
Անմիտ կենը այդ սին...
Ու ժպտում է նենգւոր,
Ու նայում պուշ-ապուշ,
Ու շոյում է անհուն,
Հըապոյը է տալիս,
Կախարդել է ջանում...
Նա դիւթել է ուղում,
Նա յաղթել է ձգտում...
Հա-հա-հա! ինձ դիւթել,
Հա-հա-հա ինձ յաղթել!...
Օ՛, հեռու! սողալու
Ընդունակ արարած...
Օ, հեռու ինձանից,
Ծաղրելի դու էակ...
Ինձ գերել ես ուղում,
Ինձ յաղթել ես ջանում...

Մանրութեամբըդ գծուծ,
Փոքրութեամբըդ անհուն...
Հա, հա, հա! օ հեռու!...
Հա, հա, հա! Հեռացիր!...
Ծաղրաբժան ու թշուառ,
Կուրութեան, Թուլութեան
Ապացոյց—ստոր կին!...
Ես Լայն-Մեծ եմ հոգով,
Ես անհուն եմ կրքով...
Ես գերուած եմ թէպէտ,
Ես անմէր եմ, անսէր...
Ես ունեմ զօրութիւն,
Ես անյաղթ կը մնամ,
Ես հպարտ եմ անհուն...

V.

Ես հպարտ եմ անհուն,
Ես անյաղթ կը մնամ...
Աստուծու նման վեհ,
Պայծակից էլ թափոտ,
Անհունից էլ աւել
Ես հպարտ եմ, անյաղթ...
Ես հոգով եմ անյաղթ,
Ես կրքով եմ անհուն...
Ահա և վանդակիս
Վշտահիւս պատի մօտ
Կծկուած է թշուառ

Մանրուգի մի էակ...
Դա գծուծ, աներես
Խեղճութիւնն է ստոր...
Օ՛, հեռու այստեղից,
Հիռացիր ինձանից!...
Ջնտ, շնտ շնտ... Անսահման
Ամաչում եմ քեզնից...
Ես հպարտ եմ անհուն,
Ես անյաղթ եմ, վսեմ,
Սակայն դու, օ թշուառ...

VI.

Անհամաբ թշնամիք
Իմ սեցաւ վանդակի,
Վշտաժայու վանդակի
Շրջապատը կանգնած,
Սպառնում են ինձի,
Ինձ յաղթել են ջանում,
Եւ սակայն ես զօրեղ,
Ես հպարտ եմ անհուն,
Թուլութեամբըս միայն
Ես զօրեղ եմ, անյաղթ...
Ես գերուած շղթայած
Վշտաժայու կապանքում,
Եւ իմ սիրտը հրդեհ,
Եւ իմ կուրծքը ժէռքար, Տ
Եւ իմ կուրծքը երկաթ,

XII.

ՎԵՐԱԿՆԻՑ

Եւ գերուած եմ թէպէտ,
Եւ սակայն ես անյաղի,
Ես հպարտ եմ անհուն...
Կը կռուեմ, կը մեռնեմ,
Յաղթութեամբ պսակուած...
Անսահման Քաջութեան
Ճնորքին է պատկան
Վսեմ փառքն Աստուծոյ...
Քաջութեան ցնորքով,
Ու ճակտիս վեհութիւն,
Կը կռուեմ, կը մեռնեմ,
Յաղթանակը հողուս...
Ես գերուած եմ թէպէտ,
Ես անյաղի եմ յաւէտ,
Ես հպարտ եմ անհուն...

I.

Արիւն-երգն-հեծեծում
Աշնան-սուդ
Նուազման

Սիրտ-հոգիս են այլում
Թախիծով սրտմաշուկ
Միաձայն...

Եւ խոցոտ, տանջանար
Դալկաշիթ իմ սրտում,
Տխուը ժամն
Հնչելիս,

Իմ վաղանց ու թառամ
Ես օրերն եմ յիշում
Ու լալիս...

Ես ընդդէմ եմ նետվում
Այն հողմին նենդ ու լժոյն,
Որ իրբե
Դալկ—տերե,

Կենսաբեկ ու տրտում,
Ինձ քշում է անհուն,
Յարատև...

II.

Կսկծաբեր սկ՝սուդ մի քուն
Պատել է իմ կեանքը անզօր...
Քղձեր-յոյսեր քնէք անհուն,
Ես ձեզ կարդամ օրօր, օրօր...

Ու միտքս կոյը, հոգիս կաշկանդ,
Ես կորցըել եմ չարի, բարու
Գիտակցութիւն—լուսի աւանդ
Եւ երգում եմ երդեր մահու...

Վշտի օրբան, ես վիշտ եմ հոծ...
Ինձ օրբում են գաղտնի ոյժեր,—
Ու երգում են սկ՝ կենսակոծ.—
«Քեզ լռութիւն!.. մունջ-լռութիւն!..

XIII.

ԵԲԻԿԱՒԾ ԸՍՏՈՒԵԲՆԵԲ...

Ես մանկուց եմ սիրել
Իրիկուայ ըստուերներ...
Իրիկուայ ըստուերներ,
Լուռ մահուան
Վկաներ...

Կեանքի վիշտը երգող
Մահ—կամարը տեսած,
Ու մահու բերկրանքի
Գուք վսեմ յայտարար,
Իրիկուայ ըստուերներ...
Իրիկուայ ըստուերներ,
Վեհ—մահուան
Վկաներ...

Եւ դողդոջը ձեր սուրբ
Գոռ տագնապն է յոյսի,
Եւ երազ անուրջի...
Զեր անհուն վշտաէջ
Դողդոջիւն երակում
Ես տեսնում եմ տագնապ
Իմ փարթամ պատրանքի,
Ես տեսնում եմ շիրիմ,

Եւ անխաչ գերեղման
 Իմ յոյսի, իմ լոյսի,
 Իմ մանուկ ցնորդի...
 Իրիկուայ ըստուերներ,
 Իրիկուայ ըստուերներ,
 Սուրբ մահուան
 Վկաներ...

Ես գիտեմ, ես գիտեմ,
 Ճանաշում եմ ճեղի...
 Չեր անհուն լռութեան
 Վեհ կամարը երազ
 Թափանցել է իմ միտք,
 Չեզ գիտէ իմ հոգին,
 Չեզ յարգում է հոգիս...
 Ես գիտեմ ճշգրիտ,
 Ինչ ասել է անհուն
 Ու թախծնտ միշտ լռել...
 Լռութեան էջերում
 Գաղտնացած է լեզու...
 Անսահման մի լեզու...
 Ես գիտեմ, այդ ցնոր
 Լռութեան խորանում,
 Դալկացօղ խորանում
 Գաղտնացած է կեանքի
 Եւ մահուան, ու լոյսի,
 Ու յոյսի, հեծեծման
 Մեծ Սաղմոսը անհուն,
 Յաւ-Սաղմոսը վշտի...

Իրիկուայ ըստուերներ,
 Իրիկուայ ըստուերներ,
 Մահու գոռ
 Վկաներ...
 Հստուերներ սրտմաշուկ,
 Հստուերներ դալկասուգ,
 Իմ հոգին-չերմագին
 Ճեզ տալիս է կարօտ...
 Իմ հոգին ճեզ համար
 Սուգ-մրուր է ծծում...
 Կեանքի վիշտը երգող,
 Եւ մանուկ անուբչի
 Տագնապի յայտաբար,
 Սուրբ մահուան քաղցրութեան
 Վեհ դրօշը մեկնող,
 Յաղթանակը մեկնող,
 Անհունի լոկ ծնունդ
 Իրիկուայ ըստուերներ...
 Իրիկուայ ըստուերներ,
 Մահուան Սուրբ
 Երազներ...

Սարից-սար ծաւալուող,
 Հոգու կոչը լսող,
 Պատից-պատ Սուր-սուրող
 Անհուն մահը պատմող,
 Ջերիմի զաւակներ,
 Հոգուն թե՛ պարզեող
 Անսահման ըստուերներ...

Եւ որքան կամեցել,
 Սպասել եմ ես ձեզ...
 Սպասել սրտատրով,
 Որ շուտով սևաթոյը
 Մտացիր, վշտացիր
 Թուխ գիշերը իրա
 Գոռ գահին կը բազմէ,
 Ճակատին դրած վառ
 Աստղազարդ իր պսակ...
 Որ շուտով կը ծագէ
 Զեր արև—սկ՝ գիշեր,
 Կը ծագէ, կարձակէ
 Մահանիւս ըստուերներ,
 Վշտահիւս ըստուերներ...
 Եւ որքան եմ կոչել
 Ես ձեզի իմ հոգով...
 Եւ որպէս եմ սիրել
 Ես ձեզի իմ հոգու
 Անսահման խորութեամբ...
 Դալկութեան թագուհի՝
 Բաղցրութեան ցնորդներ
 Սուրբ մահուան զաւակներ...
 Իմ մանուկ
 Երազներ...

Զեր գողդոջ կամարէ
 Յաղթանակ էջերում,
 Էջերում այդ անյազ
 Որքան սկ՝ ու կործան

Կեանքերի հատորներ,
 Տենչ-սրտեր ու մոխիր
 Կան ցոյուած ու ցօղուած...
 Մահացօղ ըստուերներ,
 Գեղեցկի գալարում,
 Մահ-աշխորհը տեսած
 Դալկածին ըստուերներ,
 Մեծ Հոգու
 Հնկերներ...

Իրիկուայ ըստուերներ,
 Իրիկուայ ըստուերներ...

XIV.

ՎԵՐՋԱԼՈՅՄԻՆ

I.

Արիւնշաղաղ վերջալոյսին,
 Տագնապալի վերջալոյսին...
 Վերջալոյսին ես սիրեցի,
 Սիրոյ երազ վերջալոյսին...
 Սուլ-մոխիրը մեռած սիրոյս,
 Սուրբ աճիւնը սէր անուրջիս
 Ես թաղեցի վերջալոյսին,
 Խոհ ու խոկուն, խորհրդաւոր
 Սրտիս անհուն լուռ խորանում...
 Սրտումս է այդ վառ անուրջի
 Գերեզմանը—վերան վիշտ-քար...
 Գերեզմանն այդ վերջալոյսին

Ես շոյում եմ մահուան յոյսով...
Վերջալոյսը արինշաղաղ,
Վերջալոյսին տագնապալի,
Յաւ ճաճանչով, խորտակ ըղձով
Խնկարկում է այդ գերեզման...

Վերջալոյսին
Ես սիրեցի,
Վերջալոյսին
Սէրս մեռաւ...

II.

Արինացօղ վերջալոյսին,
Տագնապ ցոյող վերջալոյսին.
Թօշնած մահուան, կենսու մահուան
Սուրբ աւետիս վերջալոյսին...
Ճիւան կեանքի, մանուկ յոյսի
Տագնապ սփրող վերջալոյսին
Վերջալոյսի վշտէ թեռվ
Անմէր սիրաբս լուր է ստանում
Սէր մահուանից, մահ աշխարհից...
Արինաներկ—ամպապսակ,
Վշտէ ծովին կամար կազմող,
Վշտէ սարին լոյս-յոյս սփրող,
Վշտէ սրտի, վիշտ խորանի
Մահու կողմից սուդ-կառավար,
Արրասուքի ժայռեր սիրող,
Ամենուրեք թօշնած վարդեր,

Թօշնած սրտեր մերթ փայփայնդ...
Արինաներկ, ամպապսակ,
Անմէր-անսէր վերջալոյսին,
Ցնորք ճակտին՝ վերջալոյսին
Հոգիս ծնուեց
Սուրբ անհունից.
Հոգիս էրուեց
Սև-ցաւ-կեանքից...

III.

Ջինջ օրօրով մահու կոչնակ
Սուդ աշխարհի վերայ ցոյող;
Նինջ կամարով վշտէ մրուր
Սև-ցաւ կեանքի վերայ սփրող,
Հոգի-արկ ազատութեան
Սուրբ դրօշակ ճակտիդ դրած,
Փառք ու մտքի լայն, անսահման
Երազ ծովում արքայ դառած,
Արինաներկ—ամպապսակ,
Անափ-անհուն վերջալոյսին
Ես իմ հոգու լայն թեռով,
Պարզած անյաղթ—հպարտ հոգուս
Առագաստը դէպի եթեր,—
Կայծակի պէս, դե՛ մտքի պէս,
Հեռու-հեռու եմ սլանում...
Դէպի մահուան մանուկ դաշտեր,
Սուրբ վեհութեան երազ էջեր...

Արիւնաներկ—ամպապսակ
Սուրբ աւետիս վերջալոյսին,
Դալկութեան մայը վերջալոյսին
Հպարտ հոգիս
Թէ է առնում,
Գրկում արև
Ազատութիւն...

XV.

Ես կը սիրեմ անհուն տանշանք,
Որ տագնապն է տենչ ու յոյսի,
Եւ կոծ-հառաչ, արնոտ պատրանք,
Որ կովումն է մութ և լոյսի...

Ես կը սիրեմ արիւն-ամպեր
Վշտից հիւսուած կրծքի խորշում,
Եւ արցունքի սե-դև ժայռեր
Ցցուած սրտի մութ խորանում...

Ես կը սիրեմ միշտ մեն-մենակ
Ծով դարդերի հետ զբուցել.
Զինջ օրօրով մահու կոչնակ
Լուռ գիշերին հեռուէն լսել...

XVI.

Կայծակը ինձ նետ՝
Անհունը հոգիս,
Աստղերը պսակ—

Դրօշ ճակատիս,
Աստուած լինելու
Ցնորքը դէմքիս,
Ազատ վեհութիւն
Պարփակ սրտիս մէջ,
Հեռու սլանամ
Փուշ-փուշ էս կեանքից

XVII.

Ծնունդ անհունի, եղբայր շէկ շանթին,
Հոգիս հոծ-կայծակ, ու սիրտս արիւն...
Ու ես հոգու պէս, ու ես ոգու պէս
Կեանքի ոլորտում շըջում եմ անքուն...

Տիեզերքն անկոպաը, եթերը անափ
Մտքիս խորշերում, հոգուս մէջ պարտակ,
Սուրբ սէր եմ տենչում անյագ ու անհաս,
Տենչանքս հզօր,—թևերըս խորտակ...

Երբ լուռ գիշերին, երկինք աստղաւուն
Անհուն լոռութեան ոգի է ցոյում,
Հզգում է հոգիս սուրբ սէրը անհաս
Ցնոր լոռութեան երազ էջերում...

XVIII.

Որդեկորոյս խղճուկ մայրեք,
Զեր անցունքը դարձրէք հեղեղ...
Արեան ծովեր, վշտէ սրտեր
Սարեր նիւթէք վշտից ահեղ...

Ե'ւ աղքատիկ, և' մեծատուն,
Հոգով Մեծը ու մանրոգին,
Սկ' հառաշից, ցաւից անհուն
Պէտք է հիւսեն այս կեանքը սին...

Սուդ-լաց կեանքեր, ասում եմ ձեզ,
Առանց լացի չը կայ գարուն...
Առանց վշտի—կայծակի պէս—
Չը կայ արե—ազատութիւն...

XIX.

Ես կը սիրեմ կըքոտ կեանքի
Արնոտ դաշտել.
Ես կը սիրեմ վառ-վառ ջանքի
Մարած կոյտել...
Ես կը սիրեմ յամառ մտքի
Համար զոհուել,
Ես կը սիրեմ հոծ—պատրանքի
Տագնապ տեսնել...
Ես կը սիրեմ բոց-տենչանքի
Շիրիմ շոյել.
Ես կը սիրեմ սէր գգուանքի
Մոխիը ցոյել...
Ես կը սիրեմ հուր կայծակի
Բոյլը ծորել,
Ես կը սիրեմ դառ արցունքի
Ծով հեղեղել...

Ես կը սիրեմ հսկայ վշտից
Փայռեր կտրել,
Ես կը սիրեմ սև ցաւերից
Սարեր նիւթել...
Խաւար ու տագնապ,
Դժոխվ ու կայծակ,
Վշտածոր կամար,
Լաց-կոծ հեծեծանը,
Դաշոյն սրի պէս
Խօսքեր դժնդակ...
Ես արդ կը սերեմ,
Ես այդ կը պաշտեմ...

XX.

Բ ԱՅՑ Ր Ը Ն Ի Ց.

Թէ վիրոտ իմ հոգու խորքերից
Սկ' թախիծ երևայ իմ դէմքին,
Ինձ համար չը յուզուես, սրտակից,
Չը հարցնես վշտերիս դու մասին...

Իմ ցաւերը ունին ապաստան,
Մշտական իրանց բունը սովոր,
Եւ դէմքիցս շուտով կ'հեռանան
Դէպ' խորանը սբուիս սկաւճը

XXI.

Հ Ա. Յ Ն է Ի Յ.

I.

Ես շըջում եմ, լալիս անտառում,
Եւ արագ թռչելով ծառէ ծառ
Շշնջում է մալ վիտը ինձի.—
—Ասա, էր ես լալիս—քո ծիծառ
Բոյը երից իմացիր. նրանք զիտեն,
Եւ կարող են պատմել այդ մասին...
Նրանք գարնան բուն էին կացը ել
Անջիգեար սիրուհուս լուսամտին...

XXII.

Պերճաշուք արևի ցոլքի տակ
Թախիծով լի հանգած է շուշան.
Եւ գլխով կամացնեկ նա թեքուած
Անուբանմ է, սպասում գիշերուան...
Ու լուսին, շուշանի սիրահար,
Սրթնացնում է նորան իր լոյսով,
Եւ շուշանը նայում է լուսնին,
Ու ժպտում իր ծաղիկ թփերով...
Նա ծաղկում է, վառվում ու վայլում,
Ու նայում երկնքին միշտ յառած,
Դողդողում է, բուրում ու լալիս,
Սիրոյ բոց-կրակովը լցուած...

XXIII.

Երբ խոր ձորում լսվում էր խօլ
Ահեղ որոտ, շանթ ու կայծակ—
Եւ սրտիս խոր-վշտից էրուած—
Բոցկլտում էր հրդեհ—կրակ...
Սէր անուբաջիս
Մահուան ժամին,—

Երբ լայն հովտում կայծակաթոր
Որոտի հետ հոսում էր ծով
Վշտի—արեան... Եւ ոռնում էր
Մահ-յաղթանակն իր դե ձայնով—
Ու բախտը ինձ
Թոյն էր եփում,—

Երբ սե կեանքի վիշտ լանչերում
Տիրում էր սով Ոգու-Հոգու...
Երբ սրտերի նինջ խորանում
Յոյս էր զոհում մահն ահարկու,—
Ոյժի ցնորք
Լայն ճակատիս,

Ես լսում եմ դե կայծակի
Կրակ ծորող յաղթ շրթերից.—
,, չեռու քեղնից գարշ—մանըութիւն,
,, Քեզ թե կը տամ իմ երակից...
Որ միշտ հպարտ
Անյաղթ մնաս...

„ Քեզ թե կը տամ Մեծ-անհունի
„ Անյաղթ չոգուց...
„ Ոսկէ վառքից... Կոռուիր անյաղթ՝
„ Մահուան պէս գոռ և անսահման...
 Տանջանք, արին,
 Զոհեր սիրեր...

XXIV.

Խ Օ Ս Ք.

Ես խօսք կուզեմ շանթի թափով,
Որ կայծակի կաթիլ լինէր...
Ես խօսք կուզեմ անյաղթ ու Մեծ,
Որ անհունի կուրծքը ճեղքէր...

Ես խօսք կուզեմ որոտի պէս
Մի հարուածով կեանքը փշողող...
Ես խօսք կուզեմ հզօր, սկ-դկ-
Անհունի հետ ինձի ձուլող...

ԱՆՀՈՒՆԻ ՃՈՒՆՉԸ



Ա

Ալեկոծ կեանքի տագնապոտ ժամին
Ու ես թե առայ երազ անուրջից.
Ու ես թե առայ մտքի ու փառաց
Հոգի Աստուծոյ վեհութեան կրծքից...
Ու սկ՝-դկ՝ մտքիս կայծակէ թափով
Ես յաղթ գարկեցի սրտիս լարերին.
Եւ ահեղ պայթեց կապանքը սրտիս,
Պայթեց-դղբդաց նման որոտին...
Ու ծնունդ առաւ յոյսիս արգանդում
Տենչանքս հզօր սուրբ-նորոգ կեանքի,
Ու սիրտս էրուեց ցնոր հրդեհում
Աստուած լինելու այն անհաս փառքի...

* * *

Ու հոգին ինձ թե, առազաստս լայն
Ես վեր ճախրեցի դէպ փառաց տաճար...
Անճառ ու անհաս պատուի, մեծութեան
Ցնորքը ճակտիս, տենչանքս յամառ,
Կայծակը ձեռիս ես կանչ եմ ահա...
Կանչ յաղթ Անհունի դէպի վեր—այնտեղ՝
Ուր միտքն է Աստուած, ցնորքը շէկ-շանթ,
Ուր իդան է անհուն, լոյս յոյսը ահեղ...
Լաջուարթ լազուրի, աստղերի ծովում,
Կեանքի ցաւ-արիւն դաշտերից վերև
Ճանթի պէս թափոտ դողանջը ես եմ...
Ղօղանջը սկ՝-դկ՝...

* * *

Պ

Էրնէկ, Էրնէկ...

Յոյս-կոյս երաղ նինջի ժամին,
Ու բոց-կրակ մտքի ահեղ
Լինեմ-թռնեմ մօտըդ, անդին,
Կեանքիս արեւ, ազատութիւն,
Փառաց տաճար, ազատութիւն...

Էրնէկ, Էրնէկ...

Ոսկի անուրջ լայն ճակատիս,
Հռգի-հեղեղ սրտիս ծովում,
Ես իղձ լինեմ, ցնորք լինեմ,
Սուրամ-ճախրեմ մօտըդ, զարուն,
Կեանքի ժպիտ, ազատութիւն...

* *

Բ

Ես փառք եմ սփրում...

Կաշկանդ սրտերի կապանքը փշրող,
Ազատ յոյսերի ու նորոգ կեանքի
Աստուած մտքերը ծորող քնարով
Ես փառք եմ սփրում...

Ես փառք եմ շնչում...

Խամրած վարդերի, մարած ըղձերի
Գարնան նուազով անհաս ու անյագ
Պատուի մեծութեան անմիտ ցնորքին
Ես փառք եմ երգում...

Ես փառք եմ երգում...

Ոսկի անուրջի յոյս-կոյս թևի տակ,
Մանուկ երազի բողբոջ պսակին,—
Վեհ ազատութեան դրօշը ձեռքիս,
Ես փառք եմ երգում...

* *

7

Հոգու սով, Ոգու սով ձեր կնճռոտ
 Տանջահար ճակատին,
 Ու փառաց, ու պատուի ժանտ-պապակը
 արնոտ
 Ձեր մըրուք -սրտերին.
 Ու ձեր կեանքը կաշկանդ,
 Օր արևէ չը տեսած...
 Ու անմէր, ու անսէր երերում, կսկըծոտ
 Եղբայրներ սրտագին...
 Հերիք չէ դեզերէք զերութեամք շղթայուած,
 Հերիք չէ վշտի ծով, սև՝ արիւն հեղեղէք...
 Դէպի ինձ, Եղբայրներ...
 Սփոփանք կը կարդամ ձեր խամրած սրտերին-
 Ձեր հոգուն ծարաւած...

**

Անհունի արդանդից՝ կայծակի երակով
 Ինձ տրուած երգովն իմ աժդրհայ,
 Ես անհուն կը կոեմ...
 Ու Աստուած հոգիներ
 Ու կայծակ երազներ, շանթէ յոյս-տենչանքներ
 Կը կոեմ ես անդուլ...
 Հարազատ Եղբայրներ...
 Դէպի ինձ... գրկարաց, օ, ես ձեզ կ'ընդունեմ.
 Ձեր այդ գոռ, անհուն վիշտը երգով
 Կը մեղմեմ, դարմանեմ...
 Ձեզ համար ես փառաց տաճարի,
 Այն հպարտ վեհութեան փակ դռները բանամ...
 Յաղթ կռուեմ...
 Գերութեան ձեր կապանքը փշրեմ...
 Հարազատ Եղբայրներ...

b

Օ՛, թողէք ինձ ազատ...
 Գէշ ու գարշ գերութեան սե՛-կակիծ կամարի
 Թուք-մրուը կապանքում,
 Տեր ողջ կեանքը սողալ ու կեղծել սովորած
 Մանրոգի գաւակներ...
 Ու շուայտ և ունայն տենչերի յետեկից
 Կուրօրէն մերթ ընկած,
 Վեհ հոգու, շանթ հոգու վերջին կայծը վատնող
 Էս ժխրը, էս գծոււծ աշխարհի շուկայում,—
 Յաղթական ըղձերի ու Աստուած ցնորքի
 Փառք պատիւը մոռցած՝
 Կապանքի գերիներ... դուք սիրում էք, զիտէք
 Հոգով մանը լինել...

Սբտակոծ շղթաներ ու միայն շղթաներ...
 Տեր զագիր թուլութեան սուգ-մըռուը ծնած,
 Տեր կաշկանդ մտքերին միշտ տիրող ու հսկող
 Երկաթէ շղթաներ ձեր բաժինն են միայն...
 Տեր սկ՝-սուգ ու դժոխք բաղդի շունչը փչող
 Դժնդակ շղթաներ...
 Դուք գերի էք ծնուել և սիրում էք յաւէտ
 Հէնց գերի էլ մնալ...
 Ու թափնտ, ու կայծնտ
 Ճանթ մտքերը ձեզնից անսահման են հեռնւ...
 Ու ես մերթ սին ունայն ձեր սիրոյ գգուանքում,
 Մարգարէ իմ հոգով,
 Մերթակի Աստուծոյ լոկ անկումն եմ տեսած...
 Ու ես մերթ փուշ ու փուչ ձեր սրտի հովտի մէջ,
 Հայեացքով իմ Աստուած,
 Յաղթանակ ցնորքի ու երազ տենչանքի
 Լոկ անխաչ ու անշուք գերեզմանն եմ տեսել...
 Դուք գերի էք յաւէտ...
 Ու չունէք հոգու թափ...

Օ՛, հեռու ինձանից գաւակներ մանրութեան...
 Ես օտա՞ր եմ ձեզի... Ես հոգի եմ... Աստուած...
 Յաղթանակ ցնորքի կայծակ-նետն անսասան
 Կարող ձեռս առնեմ...
 Էն լաջուարթ լազուրից բոյլ աստղերը շողոտ
 Մեծ հոգուս վեհ կրքով ես պոկեմ, ու որպէս

Յաղթութեան ու փառաց լուսածին վեհ պսակ
 իմ ճակտին էլ դնեմ...

 Ու ահեղ, տաղնապոտ կռուածոր ժամերին
 Բնութեան լանջնըից զոռ մըրիկը պոկեմ,
 Դե՛ որոտը խլեմ ու սրտիս անսահման
 Եւ անափ անդունդումը թաղեմ...

 Եւ Անհունը հոգիս, կռուելու ես դնամ...

 Անսասան Աստուծոյ հետ կռիւ ու մըցում
 Անվեհեր մղելու...

 Փառաց կռւաքը անհաս... թագ-պսակ վեհութեան
 Հոգու պէս յաղթութեան
 Անհունից էլ խլեմ...

 Աստուծոյ հետ կռուեմ...

 Ես հպարտ եմ անհուն,
 Ես կայծակ եմ մտքի, ես հեղեղ եմ հոգու...

 Ու իմ սիրտը հրդեհ, ու իմ կուրծքը անհուն,
 Ես երգում եմ երգեր.

 Ես երգում եմ վեհ փառք
 Աստուծոյ պէս ահեղ ու անմիտ քաջութեան
 Փառածին ցնորքին...

 Ես հպարտ եմ անհուն,
 Ես կայծակ եմ մտքի...
 Ես հեղեղ եմ հոգու...

 Օ՛, հեռու... միշտ հեռու...
 Կապանքի գերիներ...

2.

Թէ հնար լինէր...
 Կապանքը կեանքի զոռ թափով փշրել,
 Փշրել ու դէպի վերեւ սլանալ...

Թէ հնար լինէր...
 Եղբայր իմ ազիզ, ճակտիդ կնճիռներ,
 Սրտիդ ծով-վշտեր մեծ հրդեհին տալ...

Ես գիտեմ, դիտեմ...
 Ով որ ապրել է կեանքում սրտմաշուկ,
 Եղել հարկատու վշտածնը բախտին,

Ինչ էլ որ լինի,
 Ջուայտ շուկայում աշխարհի անձուկ
 Անխուսափ ցաւեր մաշում են հոգին...

Թէ հնար լինէր...
 Կայծակի թափով սե՛-դե՛ հոգու պէս
 Փուշ կեանքը փշրել, եթեր սլանալ...

Եղբայր իմ անգին...
 Ծով կեանքը թողնել-ցաւեր փրփրաղէզ,—
 Թողնել, հեռուներ ճախրել, սուրսուրալ...

Է.

ՀՈԳԻ-ՄԱՅՐԸ

Որդեակ իմ կտրիճ...
 Հեռու քեզանից սև թախծատեսիլ էն դժոխը
 մտքեր...
 Սև ցաւ են նոքա... սուդ մընկը մահուան
 կամարից եկած...
 Ու գիտեն նոքա գերեզմանաշունչ իրանց թեր
 տակ
 Կոյս ըղձեր փըշըել... ջիւան ու ազիդ կեանքեր
 խորտակել...
 Ու գիտեն նոքա յոյսերը մանուկ ձպել մահու
 դուռ.
 Ու գիտեն նոքա ոոկի երազներ թաղել շիրմի
 տակ...
 Կեանքը լոյս է վեհ... դիմացիր բախտի շանթ
 հարուածներին...
 Ու քոնն է յաւէտ յաղթանակը վեհ սուրբ
 ճշմարտութեան...
 Դիմացիր կեանքին, աժդրհայ դաւակ...

* *

Դե՛ հպարտութեան անսասան կտրիճ...
 Վկայ են ահա ազատ վշտածին ճակտիս
 կնճիռներ.
 Թէկուզ ինչ լինի... ինչ էլ որ լինի էս կեանքը
 մարդկան,
 Բայց կայ ապրելու, անյաղթ կոււելու դաշտ
 երանաւէտ...
 Ես ծեր եմ թէպէտ, ու կեանքը թէկուզ քամել
 է հոգիս...
 Եւ էլի կենաց պարծանք համարուող կուռքերի
 առաջ
 Ես ծունկ եմ չոքում... Պատուի, մեծութեան,
 կուտի ցնորքին
 Ես սիրտս կը տամ... Անդրաշխարհային կոյս
 ազատութեան
 Ազիգ-մէկուճար զաւակն եմ ես էլ... ինչ էլ որ
 լինի...
 Կեանքը յոյս է, լոյս... Տանջանքը հոգուդ պսակ
 ճակատիդ
 Նետուիր մեծ կեանքի ահեղ ծովի մէջ!.. կոուիր
 անսայթակ,
 Աժդրհայ զաւակ...

* *

Կայ... կայ վեհութիւն...
 Եւ կայ մեծ իմաստ էս վշտասնունդ տանջանքի
 ծովում...
 Ես շատ եմ ապրել... Ես յաղթ եմ ապրել...
 հեղեղ եմ հոգու...
 Մտածոր ազատ ճակտիս դալկաշիթ կնճիռը
 վկայ...
 Անհունի պէս մեծ սրտիս երկնքի արիւն
 ամպերում
 Ցցուած վշտերի ժայռերը վկայ... Ես մեծ եմ
 եղել.
 Կայ... կայ մեծութիւն... Անհաս ու ցնոր մեծ
 ճշմարտութեան
 Յաղթանակը կայ... ու մայր տանջանքի կենաց
 տաճարում,
 Վեհ աստուածաշունչ ալեկոծ կեանքի սեղանի
 առաջ
 Ու սիրտդ զոհիր... ու կեանքդ զոհիր... կայ...
 կայ սրբութիւն
 Այս արիւնշաղաղ, այս պատուապսակ կեանքի
 ծովի մէջ...
 Ու կեանքդ զոհիր հոգու վեհութեան երազ
 ցնորքին.
 Իմ իգիթ դաւակ...

**

Եւ վաղ առաւօտ, լուսումութ պահին...
 Երբ ջինջ լազուրի երազ ծովի մէջ սիրտ սրտի
 սեղմած
 Մենակ ու մնջիկ խոկում են աստղեր վառ
 ոռկեշողուն...
 Երբ անուրջ ըղձեր, յոյս-կոյս երազներ անմէր
 ու անսէր
 Ճախրում են, սուրում թախծոտ գիշերուատ
 կամարի տակին...
 Երբ խեղճ մայրերի սրտի խորանում վշտերն են
 արթուն...
 Ես լայն ճակատիս կնճիռներ դիզած կ'աղօթեմ
 երկաշը...
 Անմիտ քաջութեան ողուն ու հոգուն, անհաս
 ու անյագ
 Փառաց կուռքերին երկար կ'աղերսեմ յանոն
 մեծութեան...
 Ես ծունկ կը չոքեմ աստուած մտքերի, վեհու-
 թեան աքքայ
 Անհունի առաջ... Ես ջերմ կ'աբտասուեմ, կ'աղօ-
 թեմ ազատ,
 Կ'աղօթեմ հոգով... որդեակ քեզ համար...

**

Քո Մայրն եմ ես յաղթ...
Անհաս Անհունի փառաց տաճարում ծնունդ ես
առայ...
Աստուծոյ փառքի արգանդ դարբնոցում չոզով
ես մեծ եմ անհուն... հեղեղ եմհողու... կայծակ
եմ մտքի...
Ես քեզ թե կը տամ... իմ հոգին քեզ թե, և
ճակատդ լայն,
Ու լեզուդ հրդեհ... ու ձայնդ որոտ... կայծակը
քեզ նետ,
Անհունը քեզ յոյս... զնա կոռւելու վեհութեան
ծովում...
Կեանքը արիւն-ծով... վշտերը սե-սե կայծակի
նման
Գալարւում են զոռ, ճախրում բարկաճայթ
կեանքի ալիքներ...
Զարնում են անյաղթ վշտերը ահեղ... զարնում
ու վշտում
Մանրոգի սրտեր... մանրոգի սրտեր... և զարշ
ու գծուծ
Խաւարի զաւակ հիւանդ հոգիներ... մեծ աս-
տուածութեան
Անկումը միայն մանրութեան մէջ է... իմ հոգին
քեզ թե
Կոռւելու զնա, որդեակ իմ կտրին...

* * *

Կայ կեանք, մեծութիւն...
Կայ յամառ կրքի ու կայծակ մտքի անհուն
խորութիւն...
Կայ և լոյս ազատ... Աստուածավայել վեհ
ազատութեան
Յաղթանակը կայ... էս կեանքը դարբնոց հոգի
կուելու...
Էս կեանքն է սուրբ կանչ դէպ Անմահութեան
երազ կամարներ...
Իմ հոգին քեզ թե... Անհունը քեզ յոյս... կայ-
ծակը ձեռքիդ,
Առազաստդ լայն բաց, ազատ արի... հպարտ
ոգու պէս
Անհաս նաւակով ճախրիը աջ ու ձախ կեանքի
ծովի մէջ...
Անմիտ քաջութեան ցնորքը պսակ հպարտ
ճակատիդ,
Ահեղ հոգեբուխ դարբնոցի զաւակ, զնա կոռւելու
Որդեակ իմ իգիթ...

* * *

Կայ... կայ կեանք-արե...
Կայ իմաստ ու փառք... Աստուած, վեհութիւն...



ԿԵԱՆՁԻ ԱԳԻՆ.


Բազմած անեղ կայծակի երակին, սաւառնում է
կեանքի դաշտի վրայով. սաւառնում է և կանչում

Եկէք, զաւակներ... եկէք դէպի ինձ...
Օ՛, տեսնում եմ ես, որքան էք տանջուել,
Որքան կնճիռներ ձեր լայն ճակատին,
Որքան են դիզուած ցաւեր ձեր սրտում...
Դառնութեան ծովում խամրող իմ սրտեր,
Մե-սուգ գերութեան ցաւ կամարի տակ
Մոմոող կեանքեր... ծաղիկ հասակում
Գերեզման այցող ոսկի անուբցներ...
Երազ ու փարթամ իղձ-յօյսեր անյազ,
Որ գեռ չբացուած արեան ծովի մէջ,
Վշտի հեղեղում այրում էք անհետ...
Անմէր ու անսէր հալածուած խեղճեր
Եւ որդեկորյս մայրեր սրտմաշուկ...
Եկէք դէպի ինձ... եկէք սրտաբաց...
Կեանքի լոյսն եմ ես... կեանքի յոյսն եմ ես...
Ես եմ կեանքը... սէր... ես եմ մեծութեան
Եւ յաղթ վեհութեան հարազատ որդին...
Ես ինքս եմ կեանքը... գոռ աստուածութեան
Յաղթ շունչը ես եմ... հայէք ճակատիս
Վկայ է վսեմ մեծութեան արգանդ,
Վեհ աստուածների փառքերից հիւսուած

Թագ-պսակը այս, դրած ճակատիս...
Վկայ է սիրտս, որ մայր է անհուն
Հոգու վեհութեան վառ երազներին...
Վկայ է հպարտ Անհունին եղբայր
Այս սիրտը Աստուած, որ վեր է մտքից...
Կայծակը մտքի, ցնորքը փառաց,
Հեղեղը հոգու և աստուածութեան
Իմ մէջ են յաւէտ... իմ մէջն է հզօր
Կրակն յոյսերի, աղբիւր տենչերի...
Ճակտիս է դրած անյաղթ մտքերից,
Մեծ ցնորքներից, սէր-յաղթանակով
Վառ-ճաճանշակազմ արևը կենաց...
Եկէք, զաւակներ... եկէք սրտաբաց...
Ես ինքս եմ կեանքը... սուրբ կանչ Անհունի...
Փառքի Աստուծուց հրաւէր կ'առնեմ,
Հոգի Անհունից սուրբ ազատութիւն...

Մտքի և չոգու ծով կը հեղեղեմ...
Տիեզերքը հանուր ուղի իմ թափին.
Կայծակի թևով, մտքից էլ արագ
Արշաւանք կ'անեմ պէպի վեր... այնտեղ...
Արշաւանք կ'անեմ դէպի մեծութիւն...
Դէպ աստուածութիւնն անհաս ու անճառ...
Եկէք, զաւակներ... ես լոյսն եմ կենաց...
Ես ձեզ կը տանեմ անհաս հեռուներ...
Կը տանեմ փառաց աստուածանման
Տաճարը ցնոր... ես ձեզ կը տանեմ...
Եկէք, զաւակներ... կայծակից արագ,
Չոգու պէս թափուտ սլանանք դէպ վեր...
Ես ձեզ առաջնորդ... եկէք դէպի ինձ...
Հարազատ որդիք...

ԱՆՀԱՍ ԳԱՐՆԱՆ
ԸՂԶԵՐԸ.



Ա.

Դէշ-զարշ մանրութեան գծուծ զաւակներ
Սև-սուգ գերութեան կնիք ձեր ճակտին
Դուք գիտէք միայն սողալ ու կեղծել,
Դուք չէք ծարաւում պատուի Անհունին

Ձեր հոգսը ունայն՝
Ձեր սիրտը դաժան...

Լոյսը հարազատ սուրբ հպարտութեան
Օտար է ձեզի, արժէք չունեցող,
Կոչումը անհուն վեհ աստուածութեան
Մոռցել էք առ միշտ, արել ոտնակոխ.

Ձեր յոյսը չնշին՝
Ձեր վիշտը կեղծ—սին...

Հեռու բնաւին... պատիւս՝ անհուն,
Սնչափ ես հպարտ, ըղձերով Աստուած
Սրտիս խորանում հոգի մեծութեան
ես ձեզի իսպառ եղբայր չեմ ծնուած...
Կոչումս անեղ
Յոյսերս ահեղ...

Ես գիտեմ սիրել յաղթանակ յոյսեր
Անհունի պէս զոռ, կայծակի պէս վառ,
Անուրջի թեսով ես գիտեմ շոյել
Վշտեր ու ըղձեր, ազատ ու յամառ...
Իմ ցաւը անհուն
Իմ սիրտը արիւն...

**

Էս լուռ գիշերին
Յոյսերս են նիրհում
Երցունքէ ժայռից
Սրտիս խորանում...

Էս մունջ գիշերին
Վշտէ ծովի մէջ
Ցնոր իմ ըղձեր
Սուզուած են անվերջ:

Էս նինջ գիշերին
Ողբակոծ հոգիս
Ցօղում է, ցոյում
Շիրիմն անուրջիս...

Էս ջինջ գիշերին
Կենաց խորանում
Միրոյ երազի
Բոյլերն են մարում...

Էս լալ գիշերին
Տենչանքս ջիւան
Իջնում է մահու
Մև սուդ գերեզման...

Էս խոր գիշերին
Կեանքիցս էրուած
Քուլայ-քուլայ ծուլս
Կենէ առ Աստուած...

Էս մեղմ գիշերին
Սիրող սրտերից
Ծորում է դժոխք,
Ռինէ կսկիծ...

Էս սուզ գիշերին
Սրտերից անմէը
Երկինք են ելնում
Վշտահիւս ժայռեր...

Էս ցաւ գիշերին
Սիրոյ տագնապում
Սիրակէզ վարդեր
Խամրում են մեռնում...

Էս հեզ գիշերին
Աստղերը ցիր-ցան
Վշտէ ծովի մէջ
Լողում են անձայն...

Էս բոյլ գիշերին
Ովկեանի խորքից,
Լերանց պէս ահեղ
Ծնվում է կսկիծ...

Էս փայլ գիշերին
Լոռովթեան ծոցում
Կանչում է յաւէտ
Մահը անտրտում...

Էս լուռ գիշերին
Յոյսերս են նիրհած...
Էս մունջ գիշերին
Բղձերս են մարած...

* *

ԱՆՀՈՒՆԻ ԵՐԳԸ

գ.

Աժդիայ եղբայր,
Ի՞նչ ես որոնում
Ես գծուծ կեանքի
Սև-ցաւ ոլորտում...
Պատիւ, թէ անուն...
Կամ աստուածածին
Գոռ հպարտութիւն—
Պարծանք վեհ ճակտին...

* * *

Իզուր է եղբայր,
Ցնոր երազներ,
Անհաս ու անյագ
Մանուկ անուրջներ—
Մանըութեան արդանդ
Կեանքի ափերում
Զը կա՞ն... էլ շը կա՞ն...
Զուր ես որոնում...

Մանիր-մանիր իմ ճախարակ,
Յաղթ-ժամանակ
Կենսոտ հոգու քուլաներից
Մանիր օրեր, կեանքեր ջիւան.
Կենսակծիկ գոռ դարերից,
Մանիր անհուն անցեալ դուման...
Ականջներդ թոյն եմ ածել,
Որ միշտ մանես վշտէ ժայռեր,
Վերադ անէծք եմ կարդացել,
Որ հոծ-դժոխք մանես անծէր...

Քո անիւր սե՛ կայծակից,
Ունես ճաղեր, մտքէ-շանթեր...
Քո սոնակը դե՛-կեղծիքից,
Ունես հրեղէն խայթոց բնեռ...
Ճունչն Աստուծոյ քեզ դեկավար,
Աշխարհը ողջ քեզ օթևան,
Պտտվում ես անհաս-անճար,
Ծորում շարժում տիեզերական...
Մանիր-մանիր իմ ճախարակ,
Գոռ-ժաման ա
Մանիր ցաւեր հաստ ու բարակ...

Ժիր են մարդիկ... մտքով խիզախ
Էութիւնս կուզեն դիտնալ.

Կուզեն լինել հոգի-անկախ,
 ձշմարտութեան դաշտը բանալ...
 Որպէս լալկան վիշտ-ուռենին
 իր ճիւղերը առ միշտ թեքուած
 էլ չի կարող շիտկել կըկին,
 Սյղպէս մարդիկ տենչով լցուած,
 Խիզախ մտքի կամարի տակ,
 Ծնկառող են ինձ ըմբռնել,
 Մանիր-մանիր իմ ճախարակ,
 Վեհ-ժամանակ,
 Մանիր քուլայ-քուլայ կեանքեր...

Հէնց առաջին կեանքի օրից
 Մարդը ուզեց ինձ ըմբռնել,
 Քեզ նիւթեցի ես իմ կըծքից
 Մտքի թափին արգելք լինել...
 Հէնց այն օրից անխոնչաբար
 Ժիր մանում ես գոռ քուլաներ
 Եւ մանածից մարդկանց համար
 Սխալանքի ծորում ծովեր...
 Թել-օրերից, ցաւ-ժայռերից
 Սև-ստութեան նիւթած ծովում
 Մարդն է լողում իւր ծննդից,
 Ցաւէտ տանջվում, յաւէտ խարվում...
 Մանիր-մանիր իմ ճախարակ,
 Գոռ-ժամանակ
 Մանիր կեղծիք սուտ դժնդակ...

Միջուկդ լիք դժոխք-արիւն,
 Հոգիդ լցըել եմ կոյը կամքով...
 Քո մանածն են՝ երկինքն անհուն,
 Արար աշխարհ իրա փառքով...
 Մանիր անհաշտ չարն ու բարին
 Ժանտ ներհակով իրանց անյագ...
 Թող ծաղրարժան մարդիկը սին
 Իրանց ցնոր մտքով խորտակ
 Քո մանածը տենչան պատռել,
 Ճշմարտութեան դուռը գտնել...
 Մանիր-մանիր իմ ճախարակ,
 Յաղթ-ժամանակ,
 Մանիր կեղծիք հաստ ու բարակ...

Թշուա՛ռ մարդիկ... անմէ՛ր սրտեր,
 Դուք սնվում էք ստութեան մէջ...
 Զեզ դիւթում են վառ-ցնորքներ.
 Զառ երազի դաշտեր անվերջ...
 Թագաւորներ ունայն կեանքի,
 Խաբուած դիւթիչ և խուսափուկ
 Երազ փառքով՝ դեռ մերթակի
 Կոկներ են մղում անձուկ...
 Ահեղ կոուի դաշտերն արիւն
 Վըժժ ու դատ են մըմնջում...
 Որդեկորոյս մայրերն-անտուն
 Արցունքի-ծով են հեղեղում...
 Եւ այդ ցնոր գանձն ու պարծանք,
 Ազատութիւն, սուզ-զերութիւն,

Անուրջ ըղձեր ու պերճ պատրանք
Կայծակաշունչ թափովդ անհուն
Կործանում ես, առ միշտ վշրում
Եւ այդ ողջը միայն խորտակ
Մարած-մոխիր աճիւն դարձնում...
Մանիր-մանիր իմ ճախարակ
Գոռ-ժամանակ,
Մանիր դժոխք, մահ ու կրակ...

b
Դ Ս. Բ Ի Ն
Մտքէ կայծակներ ծորող քաջ դարձին,
Որ կեանք ու հոգի գիտես միշտ կռել,
Ինչո՞ւ, ասա ինձ, զործադուլ, անհոգ
Կռան-զնդանին դադար ես տուել...

Կայծակին նայիր,
Ճակատդ լայն բաց,
Ու կարող ձեռքով
Նետիր շանթ հարուած...

Ու զարկ... զարկ անվերջ երկաթէ սրտեր,
Աստուած-հոգիներ կռող կռանով...
Այդ աստուածաշունչ զնդանիդ վերայ
Թող ծնունդ առնէ շանթէ մտքի ծով...
Անհունին հպարտ
Հարազատ եղբայր
Զնդան ու մուրճով
Հրդեհիր աշխարհ...

Տիեզերքը հանուր հոգեշունչ դարձնոց.
Ոգեծին արգանդ կռանն ու զնդան...
Կայծակը քեզ ձեռք... ու սիրտդ որոտ,
Պոիր ու կռիր... կռիր յաւիտեան...
Աշխարհը արար
Գարշ գծուծ զանդուած
Կռակիր... դարձրո՞ւ
Միտք հոգի կռած:

Լազուրը լաջուարթ աստղերով ցիր-ցան
Դարբնոց-երագին թող փառք նուագեն.
Մասիս-Արագած, և լեառ, և հովիտ
Քեզնով կրակուած թող հողի շնչեն...
Մանրութիւն-կեղծիք,
Ու Զարն, ու Բարին,
Թող ի մի կազմեն
Հրաշունչ հոգին...

Դարբին քաջարի, ճակատդ սպատ,
Վերցրել յաղթ կուանն ու զարկ գնդանին...
Ու զարկ... զարկ անդուլ, կոիր ու կոիր...
Որ գծուծ աշխարհն առնէ իւր ուղին...

9

Միայն քեզ, որ չը կա՞ս, չը կա՞ս...
Կեանքի արև անյագ-անհաս...
Բոց-յոյսերիս մահ-տագնապին,
Ճիրիմի մօտ իղձ-փափագիս,
Շանթ-մտքերիս ցնոր թեին,
Տեսած եմ քեզ, հոգի կեանքիս...

Ակս քեզ, լոկ քեզ, ծնունդ-ողի,
Ահեղ-երազ անհաս փառքի...
Գերճ երազի դաշտի միշին,
Կայծակ-տենչի կամարի տակ,
Ճէկ-շանթերի գալար ծոցին
Տեսած եմ քեզ մտքով անյագ...

Ակս, քեզ ծծեմ... կայծակաթե
Ոսկէ անուրզ, տենչ-հոգու դե...
Միրոյ երազ վերջալոյսին,
Արիւն պսակ ամպերի մէջ—
Համբոյր-լաշուարթ ցնորքի ափին
Տեսած եմ քեզ անհուն, անվերզ...

Ակս, կեանքս է սին, տենչս անզօր,
Կաշկանդ հոգով, սիրտս սպւոր...
Զարնեմ կեանքիս գարշ կապանքին,
Կայծակ-յոյսի թափովն ահեղ
Փշեմ... հասնեմ թափառ ըղձիս,
Բոց գերմարդին հղօր-անեղ...

կ

Երազ շանթերի արդանդը ինձ մայր.

Ճնոր Անհունի դօղանջը հոգիս.

Սրտում գայրոյթ-մըրիկ ծրարած

Ինձնից ես վանեմ աճիւնը կեանքիս,

Ու որպէս հոգեծին,

Աստուծուն էլ նման,

Կանչ լինեմ Անհունին,

Կանչ կենաց, փրկութեան...

Ե'ւ շունչ, և՛ հոգի աշխարհի համար

Անուրջ-վեհութեան ոսկի դաշտի մէջ.

Նիւթեմ ցնորքից անհաս ու անյադ

Փառքի ու պատուի ապաստան անշէջ...

Եւ կանչեմ մոռացուած

Վեհ յոյսերն յաղթանակ,

Արթնացնեմ կորուսուած

Ու տենչանք, ու փափադ...

Դօղանջը հոգուս թող լսուէ յաւէտ...

Աստուած լինելու հրդեհում կենսոտ

Կոեմ ես անդուլ... կոեմ կեանք-հոգի,

Կոեմ ու կանչեմ յոյսերը կայծոտ...

Վեհութեան դաշտի մէջ

Ես նոր կեանք պարտիզեմ...

Կանչ-հոգովը անշէջ

Մարդ—Աստուած ես կոեմ...

Ը

Ը

I

Մէկ—փունջ անուրջ դալկածրար

Ցոյեց—ցօղեց իմ վեհ հոգին.

Լոյս—կոյս երազ—սիրոյ քնար

Դիւթեց ըղձերն իմ խանդագին.

Եւ վշտաբուխ ջինջ—նինջ պահին.

Ոսկի ցնորք լայն ճակատիս,

Ես ուխտ արի փառաց կուռքին

Կեանքեր կռել շանթով երգիս...

Որպէս վհհ կոչ, ես այն օրից

Կեանքի խաւար գարզ ոլորտում՝

Լարը երգիս շանթ—կայծակից՝

Երգում եմ յաղթ, հոգի կռում...

* *

II

Կրակ փողով հպարտ սրտիս
Սուրբ ճիշ ճչամ ու կանչ կանչեմ,
Յաղթ Անհունի դօղանջն հոգիս՝
Սիրոյ պսակ երգից հիւսեմ...

Սստղեր ցիր—ցան, երգով դիւթուած.
Լաշուարթ լազուր ու շանթ որոտ
Հլու են ինձ, սիրով լեցուած,
Իմ կանչն է յաղթ, հզօր-թափոտ...

Գէշ աշխարհի սին զաւակաց
Սուրբ կանչ կանչեմ պատուի, փառքի,
Կանչեմ յաւէտ, հոգի դառած,
Կանչեմ—այրեմ ցաւեր կեանքի...

թ.

Սիրոյ պսակ արշալոյսին
Վեհ փունջ ժպիտ ծփաց հոգիս...
Դողդոց աստղեր խիտ—խմբովին
Ողջոյն տուին անյագ սրտիս...

—Ուր է, եարար, անդարձ կորել
Հպարտ սրտիս իղձը մանուկ...
Երազ աստղեր, զուք չէք տեսել
Իղձը հոգուս վառ—խուսափուկ...

Սստղերը վառ ծով երկնքից
Ճինչ օրօրով մեղմ ժպտացին.
—Անմէր երգիշ, քո խանդալից
Իղձը զոհեց քո նազելին...

Ես չեմ պապակում
Սյս ունայն փառքին՝
Մին մարդուն յատուկ...

Ես չեմ ծարաւում
Սյս գծուծ պատուին
Կեանքումը անձուկ...

Հերիք է, որքան
Վարժուեցինք սողալ
Կեանքի սրտմաշուկ
Նիստուկացի մէջ...

Հերիք է, որքան
Դիտցանք մոռանալ
Աստուած դառնալու
Սուրբ կանչը անշէջ...

Ցըեմ ինձանից
Մանըութեան փոշին...
Զարնեմ վեհ սրտիս
Վշտէ կապանքին,
Փշըեմ ու երթամ...

Պատիւս անքիծ՝
Հասնեմ Անհունին...
Փառքը ցնորքիս
Ջոյեմ ջերմագին
Ու Աստուած դառնամ...

Կայծակի նման
Ամպելի միջն
Խաղալ եմ սիրում...
Փոթորկի պահին
Աստուծու առջև
Վառուել եմ ուղում...

Ովկեանի ափին
Ժայռերի պէս դե
Խոկալ եմ տենչում...
Դժոխք մըրկին
Կայծակը ինձ թե
Թռչել եմ սիրում...

Բարկաճայթ ալեաց
Զայրոյթը սկ-զե
Ծծել եմ տենչում,,
Մե-զե հոգու պէս
Կեանքից էլ վերև
Ճախրել եմ ջանում...

Կենաց տագնապին
Անուրջն հե-ի-հե
Ջոյել եմ սիրում...
Ջէկ շանթը ձեռիս
Սրտերը սին սկ
Փշըել եմ ջանում...
Վեհութեան դռներ
Մարդկութեան առջև
Բանալ եմ տենչում...

Կերթամ, մէրիկ, կերթամ հեռուն,
Կերթամ մենակ մեն-նաւակով,
Մտքի թևով, լոյս-հզոռ պէս,
Ազատութեան ոգին ինձ թե,
Կը սլանամ կայծակի հետ,
Կը փաթաթուիմ, գրկեմ նորան.
Ճունչս նորա շնչին խառնած,
Հոգիս տուած բոց-երակին,
Կերթամ, կերթամ ես կռուելու.
Զարնեմ, վշշեմ, անյաղթ մեռնեմ.,.
Հոգիս յանձնեմ կռուի հոգուն,
Մեռնելուց յետ անմահ մնամ...

Կայծակների հանգոյցի մէջ,
Ճէկ-շանթերի կամարի տակ
Թող միշտ լինի ինձ գերեզման,
Սնմահ, հապատ, յաղթ, գերեզման.
Նորա վերայ մըրիկների
Այն ահարկու հօր ժամին,
Սնհունն-Աստուած երդ կը երդեն,
Երդ անվեհեր, ազատածին
Սնմտութեան ու քաջութեան...

Ճակատս լայն, մըրիկն հոգիս,
Առագաստս լայն կը բանամ...
Նոր-կայծակը կարող ձեռքիս
Սնհունի ծոց կը սլանամ...

2Է, մէրիկ ջան, ես չեմ կարող
Գարշ մանրութեան կամարի տակ
Ապրել-մեռնել... Եւ փոքրութիւնն
Մտքի-հոգու կեանք համարել.,.
Կեանքն է կռիւ, կռուի ցնորք,
Երազ կռուի ու մեծութեան,
Աստուծոյ հետ հոգի-մըցում
Մեծ լինելու, մէկ լինելու...

2Է, մէրիկ ջան, ես չեմ կարող
Ապրել-մեռնել առանց կռուի...
Ես կը գնամ... Անհունի ծոց,
Ուր սաւառնում են յաղթ-ազատ
Կռուի ցնորքն, եսի հոգին,
Կեանքի ժպիտ, ոսկէ արև...

—Թո՛ղ, բալայ ջան, դաժան մտքեր...
Յաւ-դժոխք են նորա իսպառ,
Մահ են շնչում ու մահ սիրում...
Սկ-սկ՝ մտքեր, ահեղ մտքեր...
Սնէծք-մահուան շունչը հոծ-կոծ
Մըրւը-դժոխք, վշտի ժայռեր
Ժանտ մտքերի մէջն են լուծուած...

Իմ մէկուճար ազիզ բալայ,
Խղճա կեանք, խղճա քո մօր...
Տես, ես թաղուած եմ վշտառատ
Գէշ ծերութեան կապանքի մէջ..

Յուսակտուր, վշտածաւալ
 Մըուբ-դժոխք այս օրերին
 Մէկ յոյս ունեմ, մէկ լոյս ունեմ,
 Որ աստղի պէս կենսախորտակ
 Իմ ծերութեան մութ երկնքում
 Փայլում է վառ, ինձ կեանք տալիս...
 Այդ դրւ ես լոկ, իմ մէկուճար...

Վաղ առաւօտ, արշալոյսին,
 Երբ կոչում են աստղերն իրար,
 Երբ վշտի ցօղն երկինք-գետին
 Նոր պատում է մշուշաձե,
 Երբ անժխոր է ողջ աշխարհ,
 Ես մեն-մենակ ու ծնկաչոք
 Սուրբ Տիրամօր առաջ երկար,
 Զերմ կաղօթեմ ու կարտասուեմ,
 Որ այդ դժոխք սև մտքերից
 Դու, որդի ջան, ազատ լինես...
 Ես լալազին, զերմ կաղօթեմ,
 Որ խնդիրը վշտասնունդ
 Քո դժբախտ մօր երկինք համնէ...
 Հողմի թեռվ, ամպի փէշով
 Երկինք գնայ, համնէ Տիրոջ...

Ե՛խը, բալաս, սև ցաւ կըծքիս
 Մըուբ վշտով եմ քեզ սնած...
 Դառ արցունքս ժայռ եմ շինել,
 Բուն եմ դըել ժայռի վերայ,

Մեծացրել եմ քեզ այդ բնում,
 Լաց-հառաչս երգ եմ արել,
 Այդ սուզ-երգով եմ քեզ պահել...
 Հիմայ ինչ հող ես տամ զլվիս,
 Առանց քեզի ինչպէս ապրեմ...

Եկ, որդի ջան, եկ, մի գնա.
 Միրտս մեծ է, ովկեանի պէս,
 Այնտեղ վշտի, ցաւի ծով կայ...
 Քո սև-ցաւն էլ տուր ինձ, որդիս,
 Ես այդ ցաւը իմ խոր սրտի
 Մութ անդունդի մէջ կը թաղեմ...
 Որ այնտեղից նա դուրս չելնէ,
 Նա դուրս չ'ելնէ, քեզ չը մաշէ...

—Զուր է, մէրիկ, ես չեմ կարող
 Ապրել-սողալ... Ինձ այլ յոյսեր,
 Այլ ցնորքներ են միշտ կոչել...
 Թո՞ղ ինձ, մէրիկ, հեռու գնա,
 Էլ չեմ կարող այսուհետեւ
 Ես թուլութեան որդի լինեմ...
 Ես կը գնամ, հուր-կայծակին,
 Կոռուի ահեղ սուրբ հանճարին
 Որդի լինեմ... նոքա ինձ մայր,
 Ինձ յոյս, ինձ լոյս... հոգիս կոիւ...
 Ահա և նա...—

Կայծակակազմ, արիւնպսակ,
 Կոկծացող ու լեռնաձե,

Ոգիացած ամպերի տակ
 Խըռխտ-հսկայ լերանց միջև
 Յուզվում է բարկ, որոտագին,
 Դև-զայըրոյթից փրփուը հագած
 Ծովը հուժկու, — ծովը կատաղ...
 Եւ ալիքներն այն ահարկու, —
 Երբ երկնքի խոր արգանդից,
 Որպէս հեղեղ, շանթ ու կայծակ
 Որոտ-փալակ են յորդթափում, —
 Ճիչ են տալիս, զայըրոյթ առնում,
 Հոգի դառցած, ոգի դառցած
 Խօլ աղմկում, կուռում են գոռ,
 Զանում դէպի երկինք նետուել
 Դէպի երկինք կայծակաթոր,
 Նորա ահեղ կուրծքը ճեղքել,
 Դև մըրկին, սե՛ մըրկին
 Ցաղթ ու արի կոիւ մղել...

Եւ սուրբ կռուի, և կեանք-կռուի
 Այն անսասան յաղթութեան դե
 Հուր-հանճարը ծովի վերայ,
 Որպէս կարող յաղթ զօրութիւն,
 Որպէս Ս.ստուած կոիւ-կեանքի,
 Կայծակահիւս հրեղէն կառքով
 Ս.րադ ճախրում է երկնի տակ,
 Զարնում, փշում արար-աշխարհ...

Կայծակաշունչ, կայծակաթե
 Գոռ մըրկի հանճարը դե
 Նետվում է վեր, և աջ, և ձախ,
 Որպէս կարող Ս.ստուած-հոգի...
 Նա զարնում է, շանթահարում,
 Այրում-փշում արար-աշխարհ,
 Եւ սար, և ժայռ, և միտք, և կեանք...

Խսկ հանճարի խօլ զարգանդից.
 Ոհ-սարսափից ողջ-բնութիւնն
 Հառաչում է... Մնտառ ու սար
 Ահից դողում, կռւում են մերթ...
 Եւ ամեն ինչ, ամեն էակ
 Մահուան ահեղ տագնապի մէջ
 Աղօթում է, երկինք յառած.
 Աղօթում է մըրիկ կռւուին...
 Եւ հուր-կռուի ահեղ ծոցից,
 Ահով բռնուած սար ու ժայռից,
 Սուգ է լսվում, ողք արձակվում,
 Ճիշ-աղաղակ, լաց թուլութեան...

Խսկ հանճարը ճախրում է յաղթ
 Ու մահ սփրում և աջ, և ձախ...
 Եւ բարկ ծովի աստուածարժան
 Ոգիացած ջրերը գոռ
 Ո.րի-անվախ եռում, փրփում,
 Աղմկում են հուժկու, ահեղ,
 Եւ ջանում են մութ երկնքի
 Կուրծքը ճեղքել...

— Այդ ահարկու, կենսակործան
 չանձար-կռուի, մըրկի մէջ,
 Պարզած հոգուս, Աստուած հոգուս
 Առագաստը աղատութեան,
 Առագաստը ցնորահիւս,
 Աստուածարժան վեհ քաջութեան,
 Մտքով հոգի, տենչով հոգի,
 Եղբայր շանթին ու մըրկին՝
 Աստուածաշունչ, կայծակահիւս
 Կարող եսիս, Անյաղթ եսիս.
 Լայն, հոգեթև առագաստէ
 Նաւակիս մէջ ես մեն-մենակ
 Կը լողամ գո՛ռ, լողամ անվերջ,
 Լողամ այնաղթ ու լեռնաձեւ
 Այդ բարկաճայթ ալեաց միշին...

Ներքես ծով, կռիւ-զայրոյթ,
 Վերաս հեղեղ շանթ կայծակի,
 Ես կը լողամ, ես կը զնամ.,.
 Միայնութիւնն ընձի ընկեր...
 Ահ-կռիւլ ինձ սփոփանք...
 Կերթամ հեռուն, լողամ անհուն,
 Ճծեմ կայծակ, ծծեմ մըրկիկ...
 Ես մեն-մենակ խօլ կռուի մէջ,
 Անմտութիւնն ինձի ընկեր,
 Ես մեն-մենակ ներքես ալիք,
 Վերաս կռուի ահեղ հանճար...

Տես, մէրիկ ջան, մի ականջ դիր
 Հոգի ալեաց այդ քաջ երգին.
 Մի ականջ դիր աստուածարժան
 Ազատորդի այդ ջրերին
 «Միայնութիւն, Աստուածութիւն,
 «Մենակ եսի կայծակածին
 «Հուր բոցկլտոց կարողութիւն,
 «Կեանքին դու լոյս, կեանքին արե...
 «Մենակութիւն, կռուի ցնորք,
 «Մենակ-կռիւ եսին Աստուած.
 «Երազ կռիւ դկ քաջութեան,
 «Մտքի հրգեհ, սրտի որոտ,
 «Ազատ մարտի վեհ զաւակներ...
 «Հոգին ձեզ թե, Աստուծու պէս
 «Փառաց պսակ ձեր ճակատին...
 «Մենք երգում ենք քաջութեան երգ...
 «Փառք ու պսակ անմտութեան.
 «Մենք երգում ենք անհաս, վեհ փառք
 «Խօլ քաջութեան դկ ցնորքին...»

* * *

Լացէք մայրեր...

Զեր սուզ-լացը կելնէ երկինք...
Աղի-լեղի ձեր արցունքից
Կազմէք հեղեղ, արիւնէ ծով
Եւ ողողէք կեանքը-կսկիծ...

Լացէք մայրեր...

Յանուն գերի ձեր զաւակաց
Դառ արցունքից կտրէք ժայռեր,
Ժայռեր սմ-դև, կենսոտ, խօսուն,
Որոնք ծծեն կեանքի ցաւեր...

Լացէք մայրեր...

Եւ թող լսուէ սուզը արցունքի
Արիւն-ալեաց վեհ մեղեղին...
Մեղյուշ երգով յուզուեն ալիք,
Փարուի արցունք դև ժայռերին...

Լացէք մայրեր

Գոռ մըլիկի ահեղ ժամին
Թող շէկ-շանթեր կայծակաձև
Մերթ գալարուին արեան ծովում
Ու վիշտ երգեն Աստծու առջե...

— 66 —

ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

Թէ կայ գարուն,
Կայ մեծութիւն,
Հ. ՀԱՅ.

ԴԱՐՈՒՆ

Ինչու ես վիզըծուռ
Ու կաշկանդ դու հոգով...
Ինչու են քո աչքերն արնաշիթ,
Քո վեհ սիրտն է խոռվ...
Օ՛, հեռու քո ճակտից
Այդ ամպերը դժողովն.
Հաւատա ինձ, ինչ էլ որ լինի,
Պիտի գայ սուրբ գարուն...

Որքան էլ գերութեան
Կործանիչ շնչի տակ
Կոյս-յոյսերը մեռնեն... ու ծփայ
Սրեան ծով դժնղակ...
Որքան էլ զեղ վարդեր
Մտնեն ցուրտ գերեզման...
Բայց հեռու էլ լինի... պիտի գայ
Հողոտ կեանքը գարնան...,

Տենչկորոյս եղբայրներ,
Իր ահեղ կապանքում
Հոգու սովն է ձեզի կաշկանդել.
Եւ մաշում է... այրում...
Բայց ապատ, քաջարի
Նայէք դէպ' արշալոյս...
Ու ցըէք ձեր սրտից մանրութիւն...
Կայ գարնան ոսկի յոյս...

Արեի ցոլքերից

Դրօշակ կը հիւսեմ..,

Մեծութեան ըղձերից վեհ պսակ՝
Լայն ճակտիս կը դնեմ,
Կը սպասեմ... երազներ
Կը շոյեմ ես անհուն...

Որ փառաց ու կենաց... և նորոգ
Մեծ կեանքի գայ գարուն...

* *

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Եւ իմ սիրտը դժոխք... և իմ կուրծքը արնոտ...
Ու ես ծունկ չոքեցի վշտաբուխ գոռ կեանքի
Սեղանի առաջեւ...

Եւ կեանքի գաշտերից, ու սրտի խորանից
Մե՛ ցաւի ու արեան մտացիր գոռ ամպեր,
Որպէս լայն կնճիռներ, ու եկան դիզուեցին
Իմ ազատ ճակատին...

Եւ որպէս փոթորիկ... և նման կայծակին,
Ու կեանքի, ու մտքի գոռ հեղեղն հարցերի,—
Հոգեմաշ հարցերի,— մոնչաց դղրդաց
Ու զարկեց իմ կրծքին...

Այն հեղեղը անհաս և անյագ հարցերի
Էս կեանքի էութեան... Այն մըրիկը՝ չողին
Կաշկանդող՝ դժնաշունչ հարցերի... Մոնչաց
Ու պայթեց հոգուս մէջ...

Եւ աչերս չռած... իմ աչերն արնաշիթ...
Ու հայացքս պղտո՞ր... Եւ ցաւոտ իմ դէմքից
Մուգ-դժոխք էր ծորում... ու ճակտիս տարածուած
Վշտահիւս, կնճորտ ամպերի շարքերում
Մերթ կայծակ էր ցոլում... սև կայծակ էր լողում...
Ու ես համը էի... լալ...

Կեանքի ծովն իմ առաջ ալիքներ էր նետում,
Լեռնապէս ալիքներ... կոհակները ահեղ
Կատաղած... վրափրած... ու վշտում... ու լալիս...
Պըճալըճում, որոտում էին գոռ... Եւ ստէպ,
Դևի պէս, նրանք ջանում էին վեր բարձրանալ...
Դէպի վեր... Աստուծոյ... Մնհունի այն հզօր,
Մնհաս կուրծքը ճեղքել...

Եւ հեղեղ էր թափվում երկնքից... խօլ հեղեղ
Ճէկ շանթի, կայծակի... որ իրու Մնհունի
Մնսասան յաղթ նետեր, գալարվում էին գոռ,
Գալարվում մնծ ալեաց լերանց մէջ... Եւ ահեղ
Հեղեղատը շանթի կտրտում էր թափնկ,
Փշուր-փոշի էր անում այն լեռները ալեաց...
Եւ կայծակը փշրում էր կեանքի երեսին
Կուտակուած ծով-ամպերը... Եւ մերթ դղրդոց
Ու պայթիւն էր լսվում...

Եւ կեանքի տագնապուտ այդ պահին՝ մոլորուած
Ճատ մտքեր գեղերում էին լոկ խաւարի,
Մնթափանց խաւարի ճանկերում...

Եւ լոկ... կատարեալ հոգու սով էր տիրում
Մարդկային վշտերի խորանում վշտածոր...
Եւ որքան հառաջներ այն անմէր որքերի...
Եւ որքան սուգ ու լաց մայրերի չարաբախտ...
Եւ որքան արնածոր արցունքի դե՛ ժայռեր...
Եւ որքան գերութեան սև-մըրուր սըտաճինշ...
Եւ ճում էր ահեղ ազատ խիճը գերուած...

Ու ճշում... ու կանչում... և երկիրը կաշկանդ
Յաւերի փոթորկից և Հողու մեծ սովից
Զարզանդում էր... դողում...

Եւ եկաւ մութ կեանքի էութեան ու մտքի,
Եւ շարի, և Բարու, և անծայր տանջանաց
Մեծ հեղեղն հարցերի... և եկաւ գոռ թափով
Հեղեղաւը հուժկու... հեղեղատն հարցերի...
Ու զարկեց իմ կրծքին... ու փշրեց իմ կրծքի
Մե՛ կապանքը ցաւոտ, մանըութեան...
Եւ փշրեց ահարկու պայթիւնով իմ հողու
Ջղթաները ահեղ... ու իմ կուրծքը բացուեց...
Եւ իմ կուրծքը արին ու կրակ հեղեղեց...
Եւ լեզուս էլ բացուեց...

Եւ ծորում է ցայսօր իմ կրծքից գոռ հեղեղ...
Սրինէ... կրակէ հեղեղատ...
Եւ իմ միտքը հզօր թե՛ առաւ, թե անհաւ...
Այսուհետ ես կրակ եմ սրտով անսասան
Հեռուներ Աստուծոյ պէս անյաղթ ճախրելու...
Այսուհետ ես կայծակ եմ մտքի...
Եւ բացուեց մեծ աղբիւրն այն հպարտ,
վեհութեան

Լոկ ծնունդ, յոյսերի... ըղձերի...
Ու վառուեց անհուն կիրքը նորոգ, վեհ կեանքի,
Ու վառուեց... ու այլեց... ես հպարտ եմ, անյաղթ...
Այսուհետ ես հեղեղ եմ Հողու... Մեծութեան...
Ես Աստուած եմ... Հոգի...

Դէհ, եկէք դէպի ինձ, տանչայոյգ եղբայլներ,
Ես ձեր վիշտը մեղմել եմ սովլած...
Դէհ, եկէք դէպի ինձ, գերիներ կապանքի...
Ես կը տամ ձեզի այն, ինչի դուք էք ծարաւ...
Հոգու թե՛ ձեզ կը տամ... Այն անհաս մեծութեան
Վեհ ցնորքը ձեր խեղճ սրտերին կը ցօղեմ...
Ով ունի հոգու սով... և ում միտքն է կաշկանդ,
Թող գայ նա... Ես կը տամ մեծութեան երազներ...
Այսուհետ ես հեղեղ եմ Հոգու... Վեհութեան...
Ես Աստուած եմ... Հոգի...

Ա՞հ... ուր է... չը կայ...
Սուտ է, սուտ... չը կայ իրականութիւն,
Իզուր են անցնում մտքի թռիչքներ...
Իզուր են իսպառ ջանքեր, մտորմունք,
Ճշմարտութեան չը կայ և ստուեր...

2ը կայ... ու չը կայ...
Անփորձ պատանի, ճգնող իմաստուն,
Նետէք մոռացման վնատրումները ձեր.
2ը սպասէք բնաւ, թէ մի փայլուն օր
Պիտ արդարանան ձեր ունայն ջանքեր...

Լոկ խարէութիւն...
Ի՞նչ է միտքը մեր... Էս կեանքը վշտու...
Աշխարհը արար...—պատկեր բեմական...
Հապա ինչ ենք մենք... խեղճ... ողորմելի...
Կատակերգուներ կատակերգութեան...

Սուտ է ամեն ինչ...
Դիմակահանդէս է տիեզերքը ողջ
Եւ կեանքը ունայն, մոլի կնոջ պէս,
Դիմակաւորուած՝ կեղծիքի ծովում,
Փայլում է... խաբում... ու անվերջ այդպէս...

Անփորձ հոգիներ,
Կեանքի հովտի մէջ իսպառ չէք կարող
Գտնել ճշմարիտն... իրականութիւնն...
Սուտ է ամեն ինչ... սուտ ու խուսափուկ.
Կան լոկ դիմակներ... կայ կեղծէք անհուն...

Ես գիտեմ սիրել
Մեղսւշ երփներանգ զարդերը մահուան,
Թօշնած թփերի սօսափը վշտնտ
Ու սուրբ կոչնակը վերջին հանգստեան...

Թողէք ես լսեմ
Մտքեր վշտահիւս, խօսքեր դալկացօղ...
Եւ տիսրազգեստ այն Վեհ լուլթեան
Գերեզմանաշունչ մեղեղին մեռնող

Ես սիրտս կը տամ
Վսեմ պատրանքի մահու տաղնապին.
Եւ իղձս զոհեմ ցնոր երազի
Ու կոյս անուրջի մանրւկ շիրմին...

Դէպի ինձ...
Յոյսկորոյս ու անմէր ցաւ սրտեր.
Մեծութեան պապակած հոգիներ...

Սրտաբաց դէպի ինձ,
Թող գայ նա, ով յոդնած է վաղուց...
Ես ունայն աշխարհում սողալուց...

Դէպի ինձ քաջարի,
Կերութեան թշնամի-կապանքի
Դաւաճան,—զաւակներ վեհ վառքի...
Ես եմ կուռքը վառաց...

* *

Ես ըղձեր կը հիւսեմ—բնաւ ոչ
Երկրային,
Երկնքից գողացած, յաղթ-անմիտ,
Երկնածին
Կոյս-յոյսեր ու երազ անուրջներ
Կը քաղեմ...
Յաղթ ու գոռ ըղձերից թագ-պսակ—
Նշանակ վեհութեան—ձեր ճակտին
Կը դնեմ...
Աստուծոյ լոյս—տեսիլ վառքերից
Ու անհաս տենչերից կը խւեմ
Զեղ համար...

ԿԵԱՆՔԸ ԹՌԻՉՔ է.

Օ՛, եկէք, ես կարօտ եմ նոցա,
Ով ապրում է Աստուած դառնալու
Մեծափառ...
Դէպի ինձ խղճուկներ...
Դուք չունէք ժռչելու գոռ թևեր,
Թռչելու դէպի վեր... հեռուներ...
Զեզ մեխել,
Բևեռել են երկրին-այս ունայն,
Դէշ ու գարշ աշխարհին մանրութեան...
Ես կը տամ
Զեզ թևեր եթերումը ճախրել...
Աստուծուն հաւասար սաւառնել...
Դէպի վեր...
Ուր մտքերն են Աստուած... խորութիւն...
Ուր ըղձերն ու փառքերն են անհուն...
Դէպ' երկինք,
Ես կամուրջն եմ հզօր դէպ այնտեղ...
Դէպ նորոգ, վսեմ կեանքը անեղ...
Եղբայրներ,
Հապճեպէք դէպի ինձ...

* * *

Աժդհայ և անպարտ ճակատին շարէշար
Մէջքմէջքի արած յաղթ լեռնացած կնճիռներ...
Եւ իդիթ աչերից արնաշիթ, հրախառ
Հեղեղուող արցունքի բարկաճայթ լայն ծովեր...
Միշտ վկայ են անմեռ... և վկայ են հզօր...
Որ գալիք օրերի անթափանց մէզի մէջ
Կեանքն ունի գաղտնացած վեհ-գարուն փառաւոր,
Թէկուզ ինչ էլ լինի...

Թէկուզ ինչ էլ լինի. ոգու սով էլ լինի,
Ամպերն անյուսութեան թող անդուլ անձրեն
Խեղճ, անմէր կեանքերի վշտահիւս կապանքին...
Թող լեռներ ու ձորեր սուզ ու լաց արիւնեն...
Ու ինչ էլ որ լինի. հզօր կեանքը կնճուտ
Վեհ թոփչք է... այնտեղ... շատ հեռուն... դէպի վեր,
Որտեղ միտքն է գտնում արշալոյս արենտ...
Թէկուզ ինչ էլ լինի.

Պատերազմ... ծով-արիւն... դիակներ հեղեղուած...
Թող տէրերն աշխարհի շահամոլ գրպանի
Դերիներ ճանաչուեն... թող անկուշտ, արնախում
Գազաններ հոչակուեն... դեշ-դժոխք թող լինի...
Բայց այնտեղ... ցնողքոտ Անհունի կրծքի տակ
Արշալոյսը կեանքին իդա-գարուն է հիւսում...
Մեզ այնտեղ է տանում Ճանթ-Հոգին ի շալակ...
Ինչ կուզէ... թող լինի...

Կոռւի դաշտն արնավէժ մոնչայ թող անվերջ...
 Դիակներ հեղեղուեն...կոծ հառաշը կեանքի
 Փոթորիկ թող լինի... մըրկուէ թող անշէջ...
 Եւ շանթեր արձակող գոռ թափից փոթորկի
 Երկրագունդը դողայ... թող կորցնէ իր ուղին...
 Անկործան վշտերից կնճռացած դև սարեր
 Քաջարի ճակատին թող անբաւ խիտ բանին...
 Սամեն ինչ թող լինի...

Ու գիտէք ըմբռնել, ով մտքի անզօրներ,
 Զեր մտքերը, յոյսերը շլթայ-կապանքու
 Բանտերի անկիւնումն են բուսած... գերիներ,
 Գէշ ու գարշ մանրութեան դուք շնչին էք կարօտ...
 Զեր անթե՛, անթռիչք մտքերին փոքրութեան
 Մատչելիք է արդեօք, թէ կեաքն ուր է նետվում...
 Դէպի ուր է տանում այս ուղին դառնութեան.
 Գերիներ կապանքի...

Պատմութիւնը արնոտ յուշագիր է ահեղ
 Կեանքի ճանապարհին... ճանապարհն այս անծայը
 Մերը չէ... մենք անցնում ենք հեռուն դէպ այստեղ.
 Ուր անմեռ Աստուածներ հոգու ծով են ծորում...
 Մերը չէ այս ուղին... սա անցոր է... անփայլ...
 Ճանթ-Հոգին, որ մեզի ի շալակ է տանում,
 Ճանաշում է տաճարը փառաց ըղձավառ...
 Կայ տաճար փառքերի...

Այս ուղին մերը չէ, մեծ հոգին թևանի
 Մեզ տանում է օտար աշխարհի դաշտերով...

Եւ Անմեռը... Անկախը թափով կայծակի
 Մեր թոփշքը դիտում է Անհուն իր շնչով...
 Այս ուղին մերը չէ... Դժոխք-ճակատագրի
 Սահմանումն է ընկած մեր ուղին... որտեղ ծով
 Եւ հեղեղ կայ արեա՞ն... կրակէ վշտերի...
 Այս ուղին մերը չէ...

Փառաց կուռքը ատում է հոգով թոյլերին,
 Նոքա լոկ պատմութեան յուշագիր կը գառնա՞ն...
 Անհաշտ ճակատագրի ծովի մէջ շանթածին
 Կը մեռնեն անզօրներ... Այդ օրէնք է համայն...
 Անխուսափր կենաց լինելու է... իրաւ...
 Այդ վեհ կիրքն է անյագ Անմեռի... Անկախի,
 Որ ճամբին պատմութեան արեում է անբաւ...
 Այս ուղին մերը չէ...

Ուս ուղին մերը չէ, սա կամուքըն փառաց...
 Մեր արե, մեր կուռքեր այն ափին են... այնտեղ...
 Մեր թոփքն է անհուն... մեր տաճար լոյստարած...
 Ճանթ-հոգին թևանի կայծակոտ և անեղ,
 Որ ճախրում է... տանում մեր սրտերն ի շալակ.
 Այն յաղթ կիրքն է թափոտ ու հըեղէն... մեծ
 անյաղթ
 Ապրելու... Տիրելու վեհ տենչանքն է անյագ...
 Մեր հոգին է յաղթ կիրք...

Թող կորչի խաւարում դեգերող ու մոլոր
 Անթոիչք ու անթե մտքերի դաւանանք,

Որ ջանում է ահեղ առաջընթացութիւնն
կուրութամբ բեկանել... ու նորէն վշտաւոր
Մին օրբանը նախնի շիրմից անպարծանք
Արթնացնել... այդ կեղծիք է... դարձոր
ստութիւն...
Անմիտներ, ձեր տեսնչանքն է ունայն... անցաւոր...
Թոյլ մտքին անարդանք...

Են օտար է թոփքը կենաց ու մտքի...
Կուրութեան կապանքոտ անթափանց ճանկերից
Անկարող էք տեսնել այն արելը կըքի,
Որ խրոխտ մեծութեամբ անբացառ սրտերից
Սրենմ է... կոչում... արիւնում է հոգով.
Հեռում արշալոյսուող, ու սրտեր, ու կեանքեր
Ճանթաձև բնեռող լոյս-գարնան կարօտնվ...
Մեծ կըքումն են փառքեր...

Մեր հոգին է միակ... ու բոլոր սրտերում...
Նա հեղեղն է կըքի մեծ, արի ապրելու...
Եւ եթէ սրտերի ամպածոր երկնքում
Արնացօղ ճաճանչի յաղթ-գալար խուրձերու—
ծովի մէջ արեռում է տեսնչանք մեծութեան...
Եթէ կայ հոգու շանթ... ու մտքի հեղեղատ...
Կայ և կիրք ճախրելու դէպի վեր... անսահման...
Մէր-տեսնչանք դէպի վեր...

Անզօրներ, անթափ միտքն է ձեզի վիճակուած,
Եւ անդէտ էք... դժուծ... գիշերուող խաւարի

Կապանքումը ու թոյլ, ըղձերով էլ նեխուած՝
Զը գիտէք դուք իմաստը անյագ սըտերի...
Ի ծնէ կոյը... անմիտ... փառքերի տաճարից
Կը մնաք անբաժին... հոսանքի հետ եկած՝
Նոյնանիշ կուրութեամբ իշնելու էք բեմից...
Անբաժին էք փառքից...

Մեր սրտերը... այնտեղ կայ երկինք ու երկիր...
Ամեն ինչ... ամեն ինչ... մեր սրտերը անհուն
Անեղին հայելի են շողնտ... մտացիր...
Յաղթ-Անմեռը լաջուարթ լազուրից աստղաւուն
Արեներ է շանթել... մեր սրտումը թաղել...
Մըրկոտ երկնքից շանթ-կայժակը խլած՝
Հղձերի փաթեթով մեր հոգումն է նետել...
Մեր սրտերն են անա՛փ...

Այդ կայժակն է յաղթ կիրք արեւի... մեծութեան...
Սյդ է շանթագալար ապրելու իրաւունքն...
Որ փարթամ ըղձերի ծովի մէջ, անսասան
Թէ՛ ու թա՛փ է տալիս ճախրելու դէպի կուռքն...
Եյն մըրիկն է հոգու սրտերի թագաւոր,
Որ զայրոյթը շանթէ ճակատին պատկած,
Արիւնել է անվերջ ովկիաններ վշտաւոր...
Սյդ մեր կուռքն է փառա՛ց...

Այդ մըրիկ-իրաւունքն է մեր շունչը Անմեռ,
Որ տահում է մեզի դէպ' Արե՛ ի շալակ...
Ոհեղ կիրքն է հոգու, որ մանգաղը մահու

Բոնա՛ծ կեանք է հնձում... և ծովեր արիւնում...
Թոյլերին նա ատում է կըքով դժնղա՛կ...
Եւ նոցա, ով անյաղթ է հոգով... թոցնում...
Ու թեում է հեռնւմ... դէպի վեր... արեգակ...
Ազատ կեանքն է թոփչք...

Այդ մըրկիկ—իրաւունքն է անհաս թագաւոր
Աժդհայ սրտերի և Աստուած տենչերի...
Այդ հոգին է ցնոր, որ կեանքի սեաւոր
Օրբանից արեան ծով ծորելով... ազգերի
Գերեզմանը նիւթեց... ու ազատ սրտերին
Թեանի, ի շալա՛կ դէպ Անհունը բերեց...
Այդ վեհ կուռքն է հոգու... ու կեանքի փառածին...
իրաւունք... իրաւունք...

* *

ԵրգԱ ՈՒ ՀՈԳԻՍ.

Արնակարկաչ կեանքից հովտից ծով պսակով
Մնյուսութեան դանդաղ ու քարշ ամպերն ելա՞ն...
Գերեզմանուող նինջ լուութեան կամարներից
Մնուրջ ու իղձ հրեղէն թեով դողդո՞ջ առա՞ն...

Մանուկ սրտի սէր-աւետիս վերջալոյսին,
Երբ յուսածին ու կենսատու վսեմ Ոգու
Ըստինքը ջերմ իմ շըթերից էլ հեռացաւ,
Մնսէր հոգուս անարեզակ ծով-երկնքից
Կեանքիս ջահեր, երազ աստղեր
Կայծակաշունչ վշտի թափից
Մէկիկ-մէկիկ ընկան... կորան...

...Ո՞ւր է աւաղ
Այն յաղթանակ տենչանքների
Գարնանաշունչ արկը վառ...
Ո՞ւր է աւաղ
Վեհատեսիլ աստուածների
Երազանքս արշալուսուող...
Թուիչք հոգուս անճառ... յամա՛ռ...
Հը կա՞ն... Հը կա՞ն...
Ու իմ հոգին, որ մեծ յոյսի
Արեզակուող երկինքն էր լայն...
Նման է սին ու փուլ եկած,
Հիմքը խախուտ, սեաւոր տա՞ն...

Հեղեղածոր կեանքի դաժան ծանրութեան տակ
 Կըսոտ յոյսերն, հոգուս սիւները շուտ կոտրա՞ն...
 Եւ մտացիր ճաճանչագեղ պատերն հոգուս,
 Որ մեծ աւեան, աստուածութեան
 Հզօր ու դե ցնորդներից էին նիւթուած,
 Փլա՞ն... ընկա՞ն...

ՅՈՅԵՐ.

Եւ այդ անշուք աւերակաց մէջը այսօր,
 Ուր մունց ու լուռ, վշտատեսիլ գերեզմաններ
 Վաղաթառամ տենչանքների ու ըղձերի
 Դարձած երկինք բողնք... վրէժ են մըմնջում...
 Վհատութեան և սուզ մահու
 Սկը վրաններ են տարածուած...
 Անյուսութեան ժայռեր կան դե...

Եւ այն խորտակ աստուածութեան աճեան տակից
 Ցայտում է յորդ, մահակարկաչ և արնաշիթ
 Կենսուտ աղբէւր...

Այն արիւնող, վշտատարած ակունքներից
 Հիւսում եմ հս երգերը իմ բոյլ մարգարիտ...
 Իմ երգերն են այն աղբիւրի մշտակսկիծ
 Ցայտերը բիւր...

I

Իմ կուռք... իմ աստուած...
 Հոգիս հրդեհուց քո գոռ ծարաւից.
 Օ՛... չը կա՞ս... չը կա՞ս... վաղանց իմ գարնան
 Արշալոյսի պէս շողոտ այն շէմքին,
 Երբ հոգուս ոսկի յոյսերի ցանցում
 Ջողջողում էր լաղթ Տենչերի արկ.—
 Ես ծունկ չոքեցի բարկ, ծովանման
 Վեանքի սեղանի առաջ անխնդում,
 Ու սիրտս ուխտեց...կրքուտ իմ հոգին
 Այն օրից վեհ-վեր
 Դէպ' լոյսը շողա՞ց,
 Ու միտքս թափառ տիեզերքի ափեր
 Ճախրեց շանթաձկ...

I

Լեռներ, յաղթ լեռներ,
Դաժան ու խոժոռ կեանքի ձորելում
Անվերջ արիւնող զգացմունքների...

Ճանթեր, շէկ շանթեր,
Սև անյուսութեան մըժ-մէզ ամպերում
Դալար արձակող աստուած տենչերի...

Աստուած... էյ աստուած,
Անյազ սրտերից լոյսի ու գարնան
Ցաղթանակ մեկնած փառքի ու կուռքի...

Եւ անհունացած,
Ամպերի տակից կեանքի ծանրութեան
Վեհ արշալոյսուող մեծ ես ու չողի...

Ելէք շարէշարի...
Կայծակ շըթերով ես ձեզ եմ կոչում...
Նորոն ու ազատ կեանքի էք կարօտ...

Ըղձատար
Զօղանջը անհաս... ու ձեզ է կանչում
Դէպ աստուածափառ կեանքի առաւօտ...

II

Իմ կուռք... իմ աստուած...
Անհունը գրկող յաղթ կայծակների
Բոցաթոյը ծովում սուրբ ծնունդ առած,
Թևերը մտքիս վեհ-վեր տարածեմ...
Եւ հեղեղն հոգուս, —ոգու հոծ հեղեղ—
Մեղսուտ, սին կեանքի երեսին ցըեմ...
Եւ ցնորդների հպարտ ալեաց մէջ,
Եւ աստեղանիշ յոյսերի բիւրեղ
Կամարների տակ ճախրեմ ու նաւեմ...
Կաշկանդ սրտերի
Կապանքը փշրեմ...
Առազաստս լայն... փաշոքը... կուռքը իմ
Յաւէտ որոնեմ...

Աշխարհի տէրեր...

Կռանը շանթոտ, մտքին թագաւոր,
Յաղթ ձեռս առած ասում եմ ես ձեզ,
Անթե, անթոփչք, ըղձագուրկ, մոլոր,
Գծուծ հոգիներ...

Կապանքը սիրող,
Օտար, անծանօթ երկինք—սրտերի
Սսուուածավայել յաղթ ցնորքներին,—
Իր արևում են յանուն կուռքերին.—
Երիներ մեղսող...

Նայէք սրտմոլոր,
Գերեզմաններին արժան՝ անվայել
Գէշ ունայնութեան մշուշի տակից
Նայէք դէպի ինձ... Հոգու յուսարեր
Ես Մուլճն եմ խոժոն...

Սրտեր տենչկորոյս,
Հոգեծին մուլճով, ճակատս արե՛,
Սաստում եմ ես ձեզ, սողալ իմացող
Մտոր զաւակաց... իմ երգն է սէ-դէ՛,
Տենչանքս վեհ... լոյս...

Եւ անհունացած,
Կեանքի արշալոյս, մտքերի զեղում
Իմ չողի Մուլճով զարնեմ... կը փշըմ
Սրտերը աւեր... որ չեն ճանաչում
Ցնորքի Աստուած...

Ես վեր կը ճախրեմ
Ճնշող ամպերի խաւար կամարից...
Պէտք չէ ինձ բնաւ
Սողալ գիտնալու դպրոց վշտալից...

Ով մեծ է հոգով,
Ով գիտէ ապրել փառաց տաճարում,
Անէծք ու դժոխք
Նա պիտ անձրեէ կեանքին էրերում...

Վեհութեան արե՛
Յաղթ ցնորքներից հիւսեմ դրօշակ...
Ու միտքն ու հոգին
Կայծակի թելով, կուռքի նշանակ՝

Կարեմ դրօշին...
Ու ձեռս կարող... ճակատս արե՛,
Հոգու, ոգու պէս
Մուլճմ դրկելու անհասն աներե...

Խ Ո Բ Հ Ո Ւ Բ Դ Ք Ա Կ Ե Ա Ն Ք Ի

1

Ճակտիս խտացած անվերջ վշտերի
Այն ծով ամպերից ես իղձ եմ երգում...
Սրտիս դէղ-դիզուած—որպէս վեհ տաճար—
Հպարտ յոյսերից արե՛ եմ հիւսում...
Անյաղթ ճշմարտի գարուն ցոլքերից
Նիւթում եմ արե՛ կեանքի մնծութեան...
Ապրէք յաղթ, ազատ,
Հոգնվ էլ մենակ...

2

Ես շատ եմ ապրել... Ես յաղթ եմ ապրել...
Ամպեր են ծածկել երկինքը սրտիս...
Փորձանք հալածում, մըռու գեղութեան.
Ժպիտը կեանքի, զայլոյթը նորա,
Որպէս թուխ մշուշ ի մի համակուած,
Պատել են հոգուս կամարը անհուն...
Բայց յաղթ վեհութեան դրօշը ձեռիս,
Կարդում եմ ես ձեզ Սաղմոսը կենաց.
Մենակ ապրելում կայ կեանք ու գարուն...
Ազատ ապրելում
Կայ կոյս վեհութիւն...

Լոյսի, խաւարի անհաշտ մաքառման
Թաշտի ափերից ես ձեզ եմ կոչում...
Կեանքի ծանրութեան տակից դառնագին
Կանչում եմ ես ձեզ, կեանքի կարօտեալ,
Անմէր մնացած խղճնւկ եղբայրներ...
Եթէ ջերմագին ծարաւ էք վառքի,
Ունայն յոյսերի ժխորը մոռցէք,
Անմահ շըթերով ես ձեզ կը կարգամ
Անհաս ու անյագ կեանքի պատուիրան...
Կըքով յաղթ-աղատ,
Մենակ ապրեցէք...

Նայէք ճակատիս որոտ մըրիկին...
Թուխ-ամպ ծալքերի միջից շանթաձե՛
Անյագ աջ ու ձախ ճեղքող-գալարուող
Կայծակ զարկերին... զայրոյթ նետերին...
Կաթիլը որպէս անափ ովկիանում,
Կաթիլ է նոյնափէս մըրիկը ճակտիս
Հոգուս անդունդում ահեղ-բոնկուող
Մըրիկ—զայրոյթի ծովին համեմատ...
Եւ ինչ էլ լինի... Թէկուզ ինչ լինի...
Լոէք սուրբ գարնան յոյս-կոյս աւնտիս.
Եղէք հոգով մեծ,
Անյաղթ ու մենակ...

Վաղանց էն օրից, երբ ես գոռ կեանքի
Տաճարը մտայ... երբ ես ուխտեցի
Այդ վեհ տաճարում յոյսի և լոյսի
Ալեշ տեսնել... վառաց, մեծութեան
Ցոլքից ու շողքից հիւսուած վեհ արև,
Մեծ կուռքը կմնաց... Այն իղձ տաճարի,
Այն լոյս սեղանի առջև ծնկաչոք՝
Ջրիունքս դողդոց աղօթք մրմնչաց...
Աղերս վեհութեան, հոգու... արևի...
Եւ կոյս սըրութեան կեանքի երկնքից,
Ամպի պէս դժգոյն, լոյսի պէս աննիւթ.
Խորհուրդը կեանքի, կոչումը մարդկան
Տեսքով յուսասփիւը կանդնեց իմ դիմաց...
Մըրիկ մոնչաց... որստ դղրդաց...
Մըրտեր պայթեցին ահեղ այն պահին...
— ես վառքն եմ կեանքի... ես թափն եմ մտքի,
Արև մեծութեան... Անհունը գրկել...
Կըծքում Անհունի ծարաւ ու մնաց
Ինձի որոնել... ինձի որոնել...
Ես յոյսն եմ գարնաց...
Ես կիրք եմ անյագ...

Աղատ, տենչահիւս խորհուրդը սըտի,
Նման շէկ շանթի, հպարտ հոգու պէս,
Այդպէս մրմնչաց, մրմունջը վառքի...

Այդպէս շշնջաց կոյս իղձը կեանքի...
 Եւ սիրտս, ասես, գոռ ծով վրդովուած.
 Փրփուրը բերնին հսկա՞յ ալիքնե՞ր,
 Ահեղ ալիքներ կեանքի դառնութեան,
 Չարի ու բարու... եկան, զարկեցին
 Կրծքիս սեամած... եկան, նետուեցին
 Յոյսիս ժայերին... ու ես ուխանցի
 Յնորքը կենաց
 Անյա՞դ որոնել...

7

Ու ես շանթակերպ, ու ես հոգու պէս,
 Որպէս յաղթ-հեղեղ հոգու և մտքի,
 Որպէս լուսածոր գոռ նետ հոգերուխ,
 Որպէս Անհունի վեհ շունչը անհա՞ս...
 Որպէս կայծակէ թարգման սրտերի,
 Որպէս ահարկու երա՞կ մըրկի...
 Զեռքիս փրկութեան դրօշը մեկնա՞ծ,
 Դէմքիս էլ պսակ ոսկի ցնորքի,
 Հզօր, բոցաձե՞ գալար ես առայ,
 Զարկի սրտերի կաշկանդ ըղձերին,
 Զարկի էս կեանքի կրծքին կապանքոտ,
 Ու վիշտը ցայտե՞ց, ցայտով արնաշիթ,
 Հովիտը կեանքի ներկուեց արիւնով...
 Եւ ես թե առայ, սե՞-դե՞ հոգու պէս,
 Ու վե՞ր սուրացի դէպի հեռունե՞ր...
 Դէպի հեռունե՞ր,
 Փառքի երազնե՞ր...

8
 Լաջուարթ լագուըի անուրջ էջերում,
 Անյաղթ յոյսերի, Աստուած մտքերի
 Դարուն վայրերում ես կա՞նչ կանչեցի...
 Թափոտ սուրալով միջևն աստղերի,
 Աստղից դէպի աստղ, արկ-արկից,
 Փառքի տաճարնե՞ր... մտքի վեհ կուռքե՞ր
 Ես այց արեցի... Յոյսի և լոյսի
 Անհաս ափերից ես փունչ փնջեցի...
 Աստղից, արկից, ազատ Անհունից
 Ես յոյս չանթեցի... ճաճանչ գողացայ...
 Ծովում Անհունի—նորա գահի մօտ—
 Ես ծունկ չոքեցի... աղերս մեկնեցի...
 Արցունքը ծորաց... ու ծով հեղեղուեց...
 Ու ես իմացայ... ու ես իմացայ...
 Խորհուրդը կեանքի
 Հոգով իմացայ...

9

Ու ես իմացայ... ու միտքս գտա՞ւ
 Անհասը կեանքի... երազը փառաց...
 Թափ-ծափ տուեցի թեները հոգուս,
 Ուժգին զարկեցի սրտիս լարերին...
 Արկ-արկից... լազուրի ծովում,
 Լոյսի տաճարում պսակ հիւսեցի...
 Խորհուրդը կենաց, իմաստը մտքի
 Երազ պսակի, աստուած պսակի

Միջնը զրի... և ուխտ կապեցի,
 Անձար սրբութեան վեհ ուխտը լոյսի...
 Ու ես իմացայ... ու միտքս գտա՛ւ
 Անհասը կեանքի... Ժէռ-քար լոռութեան,
 Կեանքի ափերին կանգնած վիթխարի,
 Ցնոր լոռութեան տաճարն է խորհուրդ...
 Կեանքի կենսակոծ մըրիկը դիտող
 Բիւրեղ լոռութեան դողդոջ խորանում
 Թագնուած է գաղտնիք... իմաստը կենաց,
 Թոփշը մտքի... գարունը յօյսի...

Ու ես իմացայ
Իմաստը կեանքի...

10

Թոփշը կենսոտ հոգուս հարազատ,
 Նորոգ յոյսերով բողբոջ այն գալնան,
 Յոյս-լոյս ըղձերով անհաս ճշմարտի
 Ես գոռ մեկնեցի թեե՞ըլ հոգուս.
 Ես լայն բաց արի երազ առազաստ...
 Եւ սուր սլացայ դէպ կեանքը արնոտ,
 Եւ հուր ծորեցի դէպ կուրքն աշխարհի...
 Եւ սուրբ լոռութեան ես քար կտրեցի,
 Եւ յաղթ հիմնեցի տաճար լոռութեան...
 Կեանքի ծովի մօտ, ափին ովկիանի,
 Ու գոռ կայծակնե՞ր, մըրիկ ու որո՛տ
 Ջաշում են, հոսում կեանքի երեսին...
 Ես կուրք հիմնեցի,
 Տաճա՞ր լոռութեան...

120

Այնտեղ, ուր լեռնե՞ր, լեռնե՞ր աժդհայ,
 Որպէս քաջարի ու սերտ եղբայրնե՞ր,
 Հպանտ, մէջքմէջքի տուած, անվեհեր
 Նայում են դէպի երկինք անկոպաշը...
 Նայում ու բողոք զլկում առ Աստուած...
 Այնտեղ, ուր սե՞-ղե՞ ժայռե՞ն ամեհի,
 Նօթերը կիտած, ճակտով կնճռոտ,
 Խոժոռ ու անհաշտ նայում են հեռուն...
 Կեանքի ծովափին, ուր յաղթ ալիքներ
 Կեանքի արգանդից, փրփուրը հազած,
 Գալիս են հուժկու... գալիս ու կըծում
 Ժէռ կուրծքը ափի... որպէս վայրենի
 Գազան կատաղած, յուզում են ուժգին,
 Զարկում են, զարկում... ժայռե՞ր կրծոտում...
 Այնտեղ սկամած կեանքի ծովափին
 Ես խոհ լոռութեան տաճար հիմնեցի...
 Երազ լոռութեան անհաս խորանին
 Ու սիրտս, սւ հոգիս
 Ես զ՞հ բերեցի...

12

Ու ես Աստուծոյ գահից երկնային
 Չանթած լոյս-յոյսերն, երազ անուրջնե՞ր,
 Պսակը փառաց, ցնորքներ ոսկի.
 Յոյս-կոյս տաճարի վերայ հիւսեցի...

121

Եւ շուրջը անհաս գարուն տաճարի
 Մեռած իմ ըղձեր, մանուկ երազնե՞ր,
 Անդարձ մանկութեան յոյզեր բերկրանաց—
 Այդ ողջը արնոտ հողում թափեցի...
 Ու շուրջ կապեցին մե՛-սուզ շիրիմներ,
 Ու լուռ միսացին ամսմէր իմ տենչե՞ր...
 Խաչի փոխարքն լալկան ուռինե՞ր
 Յաւոտ մըմունջով երգեր հիւսեցին...
 Ու ես քար կտրած, փարթամ լոռութեան
 Խնկէ խորանում դէպ կեանքը դարձայ,
 Դէպ կեանքը դարձայ աղտո ճակատով...
 Խորհուրդը կեանքի
 Հոգով իմացայ...

13

Եւ կուրծքը ուռցուց գոռ կեանքը արնոտ,
 Եռաց... փրփրած արիւն յորձանքով...
 Ալիք լեռնաձև, փրփուրը բերնին,
 Կատղած շան նման ոռնում էին գոռ...
 Ու ես հոգու պէս փարթամ լոռութեան
 Յնոր տաճարից դիտում էի լոկ...
 Որպէս պարզամած լազուր դիշերին
 Մնխօս ամպերի սգուր կարաւան,
 Որ լուռ ու մնջիկ անցնում է յուշիկ
 Լուսնի առաջով ճամբան ձանձրալին,
 Կեանքի ձորերից, ալեաց անդունդից
 Ելան շարէշար սոսդ-լաց, հառաշանք,

122

Եկան ու անցան աչքիս առաջեց...
 Որպէս լուսումուվծ պահին վաղորդեան
 Ծիւ-ծիւ թռչուններ շարան ու շարան
 Ճախրում են օդում, թռչում են հեռուն...
 Արիւն-ովկիանի հեռու ափերից
 Ցոյեր ու ցոլքեր եկան քըրիջով...
 Եկան ու անցան... ու ես շանթակերպ
 Ծոցում լոռութեան նայում էի յաղթ...
 Նայում ու լոռում,
 Հոգով պապակած...

14

Եւ որչափ ջիւան կեանքի հատորնե՞ր.
 Սըիւն ալեաց հետ քշուող խառն ի խուռ...
 Ոսկի անուրջի ցրտացած մոխի՞ր...
 Եւ որչափ հալմաշ խղճուկ հոգինե՞ր
 Հոսանքը ալեաց քշում էր հեռուն...
 Քշում ու նետում ափի ժայռերին...
 Տեսայ ես կապանք... շղթայ... գերութիւն...
 Ամեն, ամեն ինչ տեսայ կեանք-ծովում...
 Կայծակը արնոտ գոռ ծովը ճեղքող,
 Մըրիկն անսահման շաշում էր ահեղ...
 Լեռները ափի տնքում շաբաշար.
 Երկիրը ահից դողում էր, դողում...
 Ու սիրտը կրծքում խամըռում էր ահից,
 Եւ յոյսը սրտի տագնապ էր ծորում...
 Ամեն արարած, անշունչ, շնչաւոր,

123

Ծովում գարդանդի զողում էր անլոյս...
 Եւ ես լուսվեան փառաց տաճարից
 Նայում էի լոկ... նայում հեռաստան...
 Իմաստը կեանքի
 Տեսնում յուալից...

15

Եւ շատ գարուններ, փարթամ ճոխութեամբ
 Զառբար պճրանքով եկա՞ն ու անցա՞ն...
 Անթիւ ձմեռներ դժնաշուք շնչով
 Տանշանք բերեցին, անհետ էլ կորան...
 Եւ շատ, շատ անդամ գարնան գալստեան
 Երազ թռչուններ համբոյք քըքիջով
 Լոյսի յաղթանակ... արև երգեցին...
 Եւ շատ, շատ անդամ աշնան շնչի տակ
 Ալբալ կանաչներ թառամ թօշնեցին...
 Սըտերը խամրած... մոխիր հոգիներ.
 Ամեն, ամեն ինչ հզօր ժամանակն
 Դժոխք-մահասփիւր իր գոռ թեփ տակ
 Քշում էր դէպի մշուշն անցեալի...
 Եւ ես լոկ նայում էի կեանքերին...
 Անյաղթ վրփրացող
 Կեանքի ճակատին...

16

Ու ես իմացայ գալուստը գարնան,
 Ու ես իմացայ իմաստը կեանքի...

124

Մենակ ապրելու անհուն ցնորքի,
 Սզատ ապրելու անհաս տենչանքի
 Երազ խորանումն է փառքը կենաց...
 Իմաստը նորա... խորհուրդը նորա...
 Հեռու ստութեան էն ծովը գծուծ,
 Որի մէջ լողում, նեխում են սրտեր...
 Սուտ... սուտ... չը կայ սէր... չը կայ մերձաւոր...
 Մարդիկ կարող չեն իրար հասկանալ.
 Անկեղծ ու հոգով իրար նուիրուել...
 Սյդ սուտ է, կեղծիք... կայ լոկ միայնակ,
 Ազատ ապրելու ցնորքը կենսոտ...
 Կայ լոկ յաղթ եսի շանթէ գալարում.
 Նման Աստուծուն, եսի թափ-հարուած...
 Միայն այդպիսով գարունը կը գայ...
 Կը գայ մեծութեան խորհուրդը կեանքի,
 Աըեան ծովի մէջ, ուր առանց սիրոյ,
 Որ յաղթ վեհութեան անկումն է միայն,—
 Արիւն ալիքի կարկաչ երգի տակ—
 Ծնունդ պիտ առնէ խորհուրդը կեանքի,
 Աստուծ պիտ դաւնայ սուրբ եսը հզօր...
 Ու ես իմացայ խորհուրդը կեանքի.—
 Ու ես իմացայ
 Թոփչքը մտքի...

* *


125

Ես ծով եմ տեսել
Սնհունապարփակ, տիեզերքից էլ մեծ.
Սնդրանուրջային մտքի հեղեղատ...
Հոծ հեղեղ է այն, սրտի երազած
Սնհաս կուռքերի... ոգու և հոգու...

Կեանքի կնճոտ հովտի մէջ անմեռ
Անտես ճրագներ... դէպ աստուածութեան
Բարձունքը դիմող վսեմ ճրագներ,
Կենաց լոյս-շահեր...
Որ բիւր դարերից ի վեր մշտավառ
Ճերմ յոյս են սփրում անսէր սրտերին...
Դաժան անգարուն ըղձերին յուշիկ
Արևում են միշտ...
Եւ արնաճաճանչ լուսեղէն վրձնով
Սրշալուսում են անյաղի եսերին...
Ես ծով եմ աեսել անհունապարփակ,
Սնդրանուրջային յոյսերի ցանցում,
Որ ողջ կայծակից... ու ողջ հրեղէն...
Հոծ հեղեղն է այն սրտի երազած
Օրհաս կուռքերի... ոգու և հոգու...

Հրեղէն ցնողքիս առագաստը ագատ
Ու նաւակը մտքիս հեռումներ է ճախրում...
Աստղերից էլ էն կողմ, Սնհունի ափերին
Ու խոժոռ, ու մոլոր թափառում է հպարտ.
Ու տեսնում եմ ահա ժամանակը ահեղ
Անսկիզբ ու անեղ ովկեանոս է փրփրում...
Եւ նորա ալեաց մէջ կայծակի դե թափով
Գալարւում են, լողում երկիրներ, աշխարհներ,
Եւ անթիւ նաւակներ...
Եւ հգօր ալիքները նորա յաղիքաբար
Ներդաշնակ ցայտումով և աստուած մեծութեամբ
Ազ ու ձախ են հոսում...
Եւ անհաս վեհութեան վէտերում ծայրէ ծայր
Տարբերում են ահեղ հրակազմ ցնձուղներ—
Յաղիք գնդեր մշտահոլով...
Որոնց զոր ովկեանի հուր յորձանքը անծէր
Իրարու է կապում
Վսեմ ձգողական զօրութեան ալիքով...
Ես տեսնում եմ ահա.
Դարերի անթափանց հրահեր այդ ցանցում—
Տիեզերածաւալ ու անհուն ալեաց մէջ
Կայ արար-աշխարհին լոյս սփրող երկու ջահ...
Կայծակէ երկ-դարբնոց, որ հոգի է կոռում...
Երկ-դարբնոցը երազ հոգեբուխ է, անշէջ...
Երկ-արկէ է հիւսում լուսատու և անմահ,
Երկ-արկէ, որ համայն աշխարհի հոգեկազմ

Սուբբ պատրոյքն է հգօղ...
 Պատրոյքն է այն թափոտ կեանքի,
 Կայծականիւ սոնակը հուր,
 Որ շանթ բոցով, ազատ կանչով
 Կռում է վեհ հոգին հանուլը...
 Այն իդան է գոռ կրքոտ փառքի,
 Ճակտին ճրագ հուր-պսակով,
 Մեծ ոշխարհի տենչանքն է յաղթ,
 Յոյս-լոյս սփրող ողջ բնութեան...
 Հեղեղ է այն սկ-դե եսի,
 Փառածաւալ ալեաց նման,—
 Համայնական կենաց լոյսի
 Սոնակը-բոց... կայ „ես“ միայն
 Եւ լոյս տենչանք հասարակաց...



ՎԵՐԶԱԲԱՆ

Գևս ԽՄ ԳՐՔՈՑԿ...


Պատրաստ ես, զրքոյկ, դնա շահասէր, ժխորա-
 տեսիլ գծուծ աշխարհում շրջագործելու... Քո տե-
 ղը թէկ յաղթ աստուածների գոռ ապարանքնե-
 րըն են անհաս, անհար... Քո տեղը թէկ աստու-
 ածավայել կոյս անուրջներն են ցնոր... Բայց կաց
 ու շրջիր երկրի երեսին ի սէր այն խիզախ ան-
 յաղթ տենչանքի, որ մի օր ունայն այս կեանքը
 պիտ գայ հոգու և մտքի աստուածութիւնը...
 Վկալ է յուս-կոյս այդ վեհ երազին արեղակը վառ,
 որ անմահութեան և փառաց պսակ ունի հակատին:
 Գնա՛, մեծ ես դու... Անհաս ու ոսկի սուրբ
 աղատութեան կամարը երազ ասպարէզ է քեզ: Ու-
 նայն, մանրոզի երկրի երեսին չը կայ քեզ համար
 քեզի անաչառ դատող դատաւոր... Մեծ ես չափա-
 գանց... Մտքից էլ ես վեր... կեանքից էլ ես վեր...
 Վեհ ես չափագանց, որպէսզի մարդիկ կարողանան
 քեզ դատի ենթարկել...

Խողճուկ ու թշուառ իմ զրախօսներ... Եւ
 դուք մերթակի ծեր ծով-մանրութեան, ծեր հոգու
 աժան, խղճուկ սաղրութեան ունայն կրքերով առաջ
 էք գալիս զուր պղտորելու բաց բանաստեղծի վե-
 հութիւնն անհաս... Փոքրութեան ծնունդ, կուրու-
 թեան աղիղ գէշ-գարշ զաւակներ... Զուր էք ստա-
 հակ դուք առաջ մղւում... Կարող էք այլպէս զուք
 միայն ցոյց տալ ծեր հոգու, սրտի կուրութիւնը
 գէշ: Դուք կոյր էք առ միշտ: Եւ միթէ ծեղ պէս
 խեղճ, ողորմելի մարդկանց է տրուած քննադասել
 այն, ինչ վեր է կեանքից... այն, ինչ երկնքի ծնունդ
 է միայն, ինչ աստուածների յաղթ երազների փըն-
 չիցն է քաղուած... Երկերը միթէ այնքան է ըն-
 կել—կուրացել, որ դուք, սին ունայն զաւակներ,
 ծեր ժանձաղութեամբ պիտ կարողանաք չափել—
 գնահատել ահեղ ու անհուն խորութիւնը մեծ...
 Հա, հա, հա, խղճուկ ով ծաղրելիներ... հա, հա, հա,
 թշուառ ով ծաղրարժաններ... ծեղ պէտքէ շղթայ.
 Դուք դիտէք սիրել սև ու սուդ կապանք... Զեր
 միաբն ու հոգին անկարող են վեր, Անհունի լան-
 չեր սուրսուրալ-հախրել: Դուք փոքր էք, չունէք
 շանթէ հոգու թե: Երկչոա էք անչափ... Փառաց
 ու պատուի ցնորք ու երազ կալծակը ահեղ օտար
 է ծեղի... Վախում էք դուք նորա դեմ բոցից:
 Ծնուած էք միայն զուք միշտ սողալու, սողալ էլ
 գիտէք ու սիրում էք այդք: Սողալ գիտացողը հախ-
 րել չի կարող...

Գնա զրքոյկ իմ... Դու մեծ ես անհուն, աղատ
 ես և յաղթ: Քո անհաս փառքի խորութիւնը վեհ
 ընդունակ է լոկ կուրքերը երկրի խիստ առհամար-
 հել... Հպարտ երկնքից փառքի ու կոչման յաղթա-
 նակը սուրբ ես գողացել եմ և քեզ եմ տուել...
 Աստուածավայել քո հպարտութեան առագաստը
 բաց... Դու աստուածներին ես պատկան-արժան:
 Եւ զիտես յարգել այն կիրքը հոգու, որ վեր է հա-
 խրում, որ գիտէ տենչալ, Անհունը գրկել, Անհասը
 ձձել... Դու զիտես սիրել վեհ բոցը հոգու, բոցկլ-
 տող յանուն անյաղթ Անհունի, հոգու մեծութեան,
 պատուի մեծութեան... Սովոր ես զու լոկ սիրել
 քաշարի այն խիզախս հոգին, որ վառվում է միշտ
 լոկ նորա համար, որ մի օր այս նեղ աշխարհում
 լինի կայծակէ հոգին, գերմարդը ահեղ...

Գնա, զրքոյկ իմ... Եթէ ծաղրարժան մարդիկ
 խիզախսն քեզ դատապարաել, քեզ վերայ թքել...
 այդ ոչինչ իսպառ... Դու բարձրես անչափ... Ինչ-
 պէս որ երկրից ենող դոլորշին, որ քաշւում է
 վեր, դէպի մալր երկինք, անձրեկի շիթով թափ-
 ւում է կրկին երկրի երեսին, այլպէս թուքը այն
 հասնելու չէ քեզ. անձրեկի պէս նա պիտ նորից
 թափուէ թքողի հակախն... Որովհետեւ զու բարձր
 ես անսահնան...

Գնա իմ զրքոյկ...
 Ա.-Պետերբուրգ.
 Յունիս 10, 1904 թ.



ԱՆՀՈՒՆԻ ՇՈՒՆՉԼ

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԵՐԵՄ

1 Զօն	3
2 Ընթերցողին	4
3 Այն հաւքեր, որ աշնան...	5
4 Է՞լ վախ աղիղ...	6
5 Էս կեանքը սև բանա	7
6 Դարդիս հետ մեն-մենակ	8
7 Բանաստեղծին	9
8 Աւերակների մէջ	10
9 Ընկերոջո զերեզմանի վերալ	11
10 Կախակներ	12
11 Ռ. Մանուկլեանից	15
12 Ես հպարտ եմ անհուն	16
13 Վերլէնից	25
14 „ „	26
15 Իրիկուալ ստուերներ	27
16 Վերջալոյսին	31
17 Ես կը սիրեմ	34
18 Կախակը ինձ նետ	34
19 Ծնունդ Անհունի	35
20 Ես կը սիրեմ	36
21 Բալրընից	37
22 Հայնէից	38
23 Երբ խոր ձորում	30
24 Խօսք	49

25 Ալեկոծ կեանքի	42
26 Էրնէկ, էրնէկ...	44
27 Ես փառք եմ սփրում	45
28 Հոգու սով, Ոգու սով	46
29 Օ՛, թողէք ինձ աղատ	48
30 Թէ հնար լինէր	51
31 Հոգի-Մալր	52
32 Կեանքի Ողին	58

ԱՆՀԱՍ ԳԱՐԱԱՆ ԷՂՋԵՐԸ


33 Գէշ-զարշ մանրսւթեան	63
34 Էս լուռ գիշերին	65
35 Աժդահայ եղբալր	68
36 Անհունի երգը	69
37 Դարբին	73
38 Միայն քեզ, որ չը կա...	75
39 Երազ շանթերի	76
40 Մէկ փունչ անուրշ	77
41 Կրակ փողով հպարտ սրտիս	78
42 Սիրոյ պսակ արշալոյսին	79
43 Ես չեմ պապակում	80
44 Կախակի նման	81
45 Կերթամ մէրիկ, կերթամ հեռուն	82
46 Լացէք մայրեր	90

ՆՈՐ ԳԱՐՈՒԿՆ

47	Գարուն	93
48	Բանաստեղծը	95
49	Ա՞հ, ուր է... չը կայ...	97
50	Ես գիտեմ սիրել	98
51	Դէպի ինձ	99
52	Կեանքը թռիչք է	101
53	Երգս ու հոգիս	107
54	Յոյզեր	109
55	Տենչանքներ	111

ՍԻՐՈՑ ՇԻՐԻՄԸ

56	Խորհուրդը կեանքի	125
57	Երազներ	126
58	Վերջաբան	129



ՀՀ Ազգային գրադարան



NL0340950

37576

1000W

ԳԻՒՆ E 60 ԿՈԴ.